Azg
armenian daily

1 ՆՈՅԵՄԲԵՐ 1995. ՇՈՐԵՔՇԱԲԹԻ # 210 (964)

Քվեբեկը մնում է Կանադայի անբաժանելի մասը

ՕՏՏԱՎԱ, 31 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍ: Հոկտեմբերի 30-ին Կանադայի Քվեբեկ նահանգում, ուր բնակվում է մոտ 5 մլն մարդ, կայացավ «անկախության հանրաքվե»: Մասնակիցների 97 տոկոսի հաշվարկով քվեարկողների 50,6 տոկոսը դեմ է արտահայտվել Կանադայից Քվեբեկի անջատման գաղափարին: Կողմ է քվեարկել 49.4 տոկոսը: Այսպիսով, երկրորդ անգամ անջատողական միտումներն այստեղ բախվում են բնակչության մեծ մասի դիմադրողականությունը: ■

Բաքվի մետրոյի հրդեհը ահաբեկչություն չէ

ԲԱԿՈՒ, 31 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍ: Հոկտեմբերի 28-ին Բաքվի մետրոյում բռնկված հրդեհի դատճառով զոհ վածների նոր դիակներ են հայտնաբերվում: Նախապես հաղորդվել էր, որ զոհվել է 289 մարդ: Սա կայն Բաքվի դիահերձարանից տեղեկացրել են, որ իրենց մոտ բերվել է 303 դիակ: Միաժամանակ հիվանդանոց տեղափոխվածներից առնվազն 60 մարդու վիճակը ծայրաստիճան վատ է: Ադրբեջանի ՆԳ նախարարը վերջնականապես հերքել է հրդեհն ահաբեկչության արդյունք ներկայացնելու մասին լուրերը: Առողջապահության նախարարն իր հերթին նշել է, որ բժիշկները ճնշել են բոլոր վիրավորներին ու չի հայտնվել որևէ վերք, որ կարող էր դայթյունի հետևանք լինել: Վերջին հաղորդումների համաձայն, երեկ Բաքվի մետրոյում տեղի է ունեցել նոր միջադեպ: Վագոններից մեկի շարժիչում հրդեհ է բռնկվել, որ հաջողվել է ժամանակին մարել: Տուժածներ չկան: ■

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Ռոբերտ Քոչարյան. «Լրատվության միջոցները դեմ է նդասեն դեմոկրատության կայացմանը»

Ազգվածային լրատվության միջոցների ընթացիկ եւ առաջիկա խնդիրների մասին է նվիրված ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի երեկ, հոկտեմբերի 31-ին տեղի ունեցած հանդիպումը լրագրողների հետ: Ասիաստանային այդ հանդիպմանը, որը կազմակերպվել էր ԼՂՀ նախագահի անձնական նախաձեռնությամբ, մասնակցում էին հանրապետության մամուլի օրգանների, հեռուստատեսության ու ռադիոյի, ինչպես նաեւ մի շարք երկրների դարբերականների, լրատվական գործակալությունների ԼՂՀում հավատարմագրված թղթակիցներ: Անդրադառնալով արդի խնդիրների ազատագրական պայքարի նախորդ տարիների, ինչպես նաեւ ԼՂՀ դեմոկրատության կայացման ընթացիկ շրջանի տարբեր փուլերում հանրապետության ռազմաքաղաքական եւ սոցիալ տնտեսական առաջընթացի առանձնահատկություններին նախագահը մատնանշեց այն հիմնական փոփոխությունները, որոնք բնորոշում են անցած ժամանակամիջոցում ԼՂՀում իրականացվող լրատվական քաղաքականությունը:

Ի տարբերություն դատերազմական շրջանի, ասաց նա, երբ բոլոր միջոցները, այդ թվում նաեւ լրատվական միջոցների գործունեությունը գլխավորապես ուղղված էին մեկ հիմնական նպատակի՝ ազատագրական պայքարում հաղթանակի ապահովմանը, ներկա ժամանակամիջոցը առանձնանալով «ոչ դատերազմ, ոչ խաղաղություն» կացությամբ, միանգամայն նոր, ընդ որում դարձյալ ոչ դյուրին լուծելի խնդիրներ է առաջադրում երկրի ղեկավարության, ԼՂՀ բոլոր հաղթացիների, այդ թվում նաեւ լրագրողների առջեւ:

Տես # էջ 2

Փասաբան Ռուբեն Սահակյանը հրաժարվում է իր դաշտանյալից, որի իրավունքը սակայն չունի

Փասաբան Ռուբեն Սահակյանը հոկտեմբերի 31-ին ընթացող «Դո» գործի դատավարության ժամանակ հայտարարեց, թե հրաժարվում է ամբաստանյալ Արա Հարմանդայանին դատդատանելուց, այն բանից հետո, երբ նախագահողը ցանկացավ հրադարակել նրա 95թ. հունվարի 18-ի նախաքննական ցուցմունքները: Փասաբանը դեմ էր նշված ցուցմունքի հրադարակմանը, պնդելով, որ Հարմանդայանի դատարանում տված եւ նախաքննական ցուցմունքների միջեւ հակասություններ չկան, բացի այդ ամբաստանյալին ադոթինի գենք ու զինամթերք ձեռք բերելու ու դահելու մեղադրանք չի առաջադրվել: Նախագահողն, իհարկե, համամիտ չէր արված առաջարկին, սակայն վիճաբանությունից հետո ստիպված էր վաղաժամկետ ընդմիջում հայտարարել, որից հետո հրաժարվեց ցուցմունքները հրադարակելու մտից: Վերջին յոթ նիստերում դատարանի ուշադրության կենտրոնում միայն Ա. Հարմանդայանն էր, ոչ միայն իրեւ ամբաստանյալ: Լինելով լիբանանցի, նրա ցուցմունքները լրացուցիչ տեղեկություններ էին նաեւ գործընկերոջ Արսեն Ադրունու, վերջինիս Հրանտ Մարգարյանի հետ ունեցած փոխհարաբերությունների մասին: Ամբաստանյալը վերահաստատեց նաեւ Ադրունու դատարանում տված որոշ ցուցմունքներ, որոնք հատկապես առնչվում էին ՀՅԴ-ին նրանց անդամակցությանը: Ա. Հարմանդայանը պնդեց, որ Հայաստան գալուց հետո իր կուսակցական գործունեությունը սառեցվել է, ինքն ու Ադրունին Լիբանանից փոխանցագիր չեն ստացել, որեւէ կոմիտեում կամ խմբում չեն ընդգրկվել: Բայց եւ երբեմ էլ չեն հրաժարվել դաշնակցությունից: Հ. Մարգարյանին ու Գ. Սահակյանին ճանաչել է որպես դարաբաղյան ազատամարտի կազմակերպիչներ:

Տես # էջ 2

Հայկական կոնյակի նոր դարգեւները

Տինգ մեդալ Սանկտ Պետերբուրգից

ՏԻԳՐԱՆ ԼԻԼԻՅԱՆ

Նոր մեդալներով հավելվեց հայկական կոնյակի դարգեւների հարուստ հավաքածուն: Ոգեղից խմիչների Սանկտ Պետերբուրգում կայացած միջազգային ցուցահանդես-համտեսին Երեւանի կոնյակի գործարանի արտադրանքի մի քանի տեսակներ արժանացան երկու ոսկե, երկու արծաթե եւ մեկ բրոնզե մեդալների: Ոսկե մեդալ ստացան «Նաիրին» ու «Հայաստանը», արծաթե մեդալ՝ «Ախթամար» ու «Հոբելյանականը», իսկ բրոնզե՝ «Արարատ» կոնյակը: Հատկանշական է, նշեց մեզ հետ երեկ ունեցած հարցազրույցում գործարանի տնօրեն, Հայաստանի Ազգային ժողովի դատգամավոր Այբերտ Հերոյանը, որ մրցույթին մասնակցել ու դարգեւներ են ստացել ոչ թե հավաքածուի հատուկ դատրաստած նմուշները, այլ հասարակ, մանրածախ առեւտրից վերցրածները: Շեշտակությունում անգամ չդիտեին, որ հայկական կոնյակը ներկայացվել է մրցույթին, խոստովանում է Ա. Հերոյանը: Դրանով իսկ այդ դարգեւները ավելի արժեքավոր են, դրանով ավելի է ընդգծվում մեր կոնյակի որակը, ասաց տնօրենը: Երեւանի կոնյակի գործարանում մշակված են կեղծ արտադրանքի տարածմամբ, որը անազնիվ ձեռներեցների քանիերով լայնորեն տարածվում է Ռուսաստանում: Նախկին Խ. Միությանը հանդեսությունների մեկ եւ ներկայացվում է իբրեւ իսկական: Այնինչ, ասում է գործարանի գլխավոր ճարտարագետ Իշխան Մանուկյանը, արդեն երկու տարի է, ինչ հայկական կոնյակը լցվում է միայն երեւանում եւ այլեւս ոչ մի տեղ:

Նա խորհուրդ տվեց կոնյակ գնել միայն գործարանի ֆիրմային խանութներում կամ ձեռնարկության դատարդորների միջոցով: Ի դեմ, նշեց Ի. Մանուկյանը, Սանկտ Պետերբուրգի ցուցահանդես-համտեսի կազմակերդիչը՝ «Լենէքսդո» ցուցահանդեսային բաժնետիրական ընկերությունն այդդես էլ արել էր, դիմելով գործարանի Նեւայի հաղորդում գործող ներկայացուցչությանը. կեղծիքների դեմ դայքարելու լավագույն միջոցը՝ որ ամեն ինչ դարզի ադաղողը, գնողը, ասում է գործարանի գլխավոր ճարտարագետը: ■

ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍ

Արգենտինայի նախագահը վետոյի է ենթարկել գեղասդանության հիշատակման առաջարկը

ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍ, 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ, «ԱՍՊԱՐԷԶ»- Արգենտինայի կառավարության Գերագույն գործադիր մարմինը վետոյի է ենթարկել Սենատի ու խորհրդարանի միացյալ նիստում, որը նախատեսում էր, ինչպես հայտնի է մեր ընթերցողներին, աբրիլի 24-ը համազգային հիշատակի օր հռչակել երկրում, որպես մարդու նկատմամբ մարդու անմարդկայնության դեմ բարոյի արտահայտություն: Հանրադետության նախագահ Կարլոս Մենեմի, վարչադետ Էդուարդո Բոսայի եւ արտգործնախարար Քուիսո Թելլայի ստորագրած այդ հրամանագիրը, որը լույս է տեսել հոկտեմբերի 17-ին դետական դաշտոնաթերթում, խոր դժգոհություն է առաջացրել արգենտինահայության շրջանակում եւ երկրի օրենսդիր մարմնում: Վետոյի օգտագործման համար գերագույն գործադիր մարմինը դատճառաբանել է, որ 1948 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած որոշման համաձայն դեկտեմբերի 10-ն արդեն նվիրագործված բվական է միջազգայնորեն նշելու մարդու իրավունքների դաշտդանությունը եւ, հետեւաբար, ազգային հիշատակի օր որդեգրելու կարիք չկա: Գերագույն գործադիր մարմինը, վկայակոչելով Արգենտինայի սահմանադրության 83-դ հոդվածը, օրենսդիր մարմնին կոչ է արել վերատեսության ենթարկել նախատեսված առած իր որոշումը:

Մյուս կողմից, Հվեյցարիայի Ազգային խորհուրդը (խորհրդարան) դատասխանել է այս տարվա սկզբին իր անդամներից ոմանց կողմից իրեն ուղղված մի նամակի, որը խնդրում էր հատակեցնել Հվեյցարիայի դիրքորոշումը Հայկական ցեղասպանության փաստի նկատմամբ: Իր դատասխանը Ազգային խորհուրդը հիմնավորել է ՄԱԿ-ի, Եվրախորհրդարանի եւ միջազգային այլ մարմինների միակողմանի որոշումներով, սակայն խուսափել է հանձնառու կեցվածքից, փոխարեն զոհանալով դատմական որոշակի փաստերի նշումով՝ Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում հայերի դիմագրաված դաժանություններ եւ այլն առանց մատնանշելու Հայկական ցեղասպանության հեղինակներին: ■

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ. Բագրատյանը ցավակցեց Ռ. Գուլիեւին

Բաքվի մետրոյում տեղի ունեցած դդբերգական դատահարի կատդակցությամբ ՀՀ վարչադետ Հրանտ Բագրատյանը ցավակցական հեռագիր է հղել Ադրբեջանի վարչադետ Գադր Իլիեւին:

ԱՐՍԵՆՊՈՒՏ

Գրաչովը ՆԱՏՕ-ին զգուշացրեց

Ռուսաստանի դաշտդանության նախարար Պավել Գրաչովը, որը դաշտնական այցով գտնվում էր Հունաստանում, եկույթ ունեցավ տեղի Ազգային անվտանգության ակադեմիայի ունկնդիրների առաջ, որի ընթացքում խոսելով ԽՍՀՄ-ի փլուզումից եւ Վարշավյան դաշտության երկրների կազմալուծումից հետո Արեւելյան Եվրոդայում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի մասին, նշեց, որ եթե ՆԱՏՕ-ի հրամանատարությունը համաձայնի ընդունել հյուսիսատլանտյան ռազմական դաշինքի կազմի մեջ Արեւելյան Եվրոդայի եւ մերձբալթյան երկրներին, առա Ռուսաստանը կտրականապես կվերանայի իր դաշտդանական ռազմական դոկտրինան եւ կդիմի ակտիվ դաշտդանության միջոցների: Ըստ Գրաչովի, եթե Ռուսաստանը ՆԱՏՕ-ի կողմից վտանգ տեսնի, առա ստիպված կլինի փնտրել նոր դաշնակիցների, այդ թվում նաեւ նախկին ԽՍՀՄ-ի շարք հանրադետությունների հետ կնքնակվի նոր ռազմական դաշինքի ստեղծման հարցը:

ՀԱՄԱՌՈՏ

Լուդերսը կընտրվի ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար

Հոլանդիայի նախկին վարչադետ Լուդերսը շաս հավանական է, որ ընտրվի ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար: Սա հայտնի դարձավ այն բանից հետո, երբ երեկ Գերմանիայի կանցլեր Հելմուտ Քոլը միացավ Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակին եւ Մեծ Բրիտանիայի վարչադետ Ջոդ Մեյջորին, նշելով, որ նույնդես աջակցում է դարոն Լուդերսին, եթե վերջինս ցանկանա ստանձնել ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի դաշտոնը: Ինչդես հայտնի է, Հելմուտ Քոլը նախկինում դեմ է եղել Լուդերսին եվրոդական միությունում դաշտասխանատու դաշտոնի նշանակելուն այն բանի համար, որ նա հարկ եղած ձեւով չի դաշտպանել ու աջակցել Գերմանիայի վերամիավորման հարցին:

Չինաստանը հրաժարվեց փորձարկումից

Չինաստանը հրաժարվել է այս տարվա վերջին ծրագրված եւս մեկ միջուկային փորձարկումից: Այս մասին հոկտեմբերի 31-ին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնել են Չինաստանի Ժողովրդական Հանրադետությունում ճադոնիայի դեսպանատանը մոտ կանգնած իրազեկ աղբյուրները: Պեկինի այս որոշումը, գտնում են նրանք, որոշակի զիջում է Տոկիոյին, որը դայքարում է հասնելու միջուկային դայթեցումների լիակատար դադարեցման եւ դա ուղղակիորեն կաղում է Չինաստանին տրամադրվելիք վարկերի հետ:

ԱՐՍԵՆՊՈՒՏ

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ

Գյումրի-Բագրատաշեն ավտոբուսը կողոդոտողները ձերբակալվեցին

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, 31 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍ: Ինչդես արդեն տեղեկացրել ենք, հոկտեմբերի յոթը 20-ի գիշերը երեք անհայտ անձանց կողմից ավազակային հարձակման էր ենթարկվել Գյումրիից Բագրատաշեն մեկնող ավտոբուսը: Կողոդոտը կատարվել էր Նոյեմբերյանի շրջանի տարածքում, Այրում ՀԷԿ-ի մոտ: Գործի քննությունը վարում էր Նոյեմբերյանի ՆԳ բաժինը: Ոստիկանների արագ եւ օպերատիվ գործողությունները դրական արդյունք տվեցին: Նոյեմբերյանի ՆԳ բաժնի դետ Էդիկ Մեջինյանը Փասի թղթակցին ասաց, որ հանցագործությունը բացահայտված է: Կան ձերբակալվածներ: Գործով քննությունը շարունակվում է: Հանցագործները նոյեմբերյանցիներ չեն: Քննության շահերը դահանջում են, որպեսզի նրանց անունները ու բնակության վայրը առայժմ չհրադարակվեն: Հանցագործների մեջ կան նախկինում դատվածներ:

Հոկտեմբերի 28-ին Գյումրիից Նոյեմբերյանի ոստիկանատուն էին եկել տուժածներ: Նրանք Փասի թղթակցի հետ զրույցի ժամանակ հայտնեցին, որ առեւտրական ընթացքում ճանաչել են իրենց կողոդոտողներին: ■

ԹՈՒՐՔԻԱ

Դեմիրելը հավանություն տվեց Չիլլերի նոր կառավարությանը

Սեդտեմբերի 30-ին, ուր երեկոյան, նախագահ Սուլեյման Դեմիրելը հաստատեց Թուրքիայի նոր կառավարության կազմը: Այն բնույթով կոալիցիոն է, կազմավորվել է ճշմարիտ ուղի եւ Ժողովրդա-հանրադետական կուսակցությունների մասնակցությամբ: Կառավարությանը գլխավորում է Թանսու Չիլլերը: Իսկ Դենիզ Բայքալը գրադեցնում է փոխվարչադետի դաշտանը, արտգործնախարարի դաշտանի հետ համատեղելու դայմանով: Ըստ երեւույթին Չիլլերի այս կառավարությունը, որ 52-դն է երկրի դատմության մեջ, առաջիկա կիրակի օրը վստահության քվե կհայցի Մեջլիսից: Ի դեդ, կառավարդ կոալիցիայի անդամ կուսակցությունների գրադեցրած տեղերի քանակը Մեջլիսում բավարարում է վստահության քվեի համար անհրաժեշտ ձայներդ: Ամենայն հավանականությամբ կառավարությանը վստահություն կհայտնեն նաեւ Ազգայնական շարժում կուսակցության 17 դատգամավորներ: Անհրաժեշտ է նշել, որ սա միջանկյալ կառավարություն է լինելու երկրի դեկտեմբերի 24-ին նախատեսվող հանրդետական ընտրություններին նախադատրաստելու գլխավոր առաջադրանքով:

Հ. Ց.

digitised by A.R.A.R.@

տեղական

ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆ

Պաշտպանել մարդու իրավունքները՝ սովորեցնելով

Վ. Մովսիսյանի առաջին ատյիսը նոր պաշտոնում

Օրերս տեղեկացրինք («Ազգ», 28 հոկտեմբեր) Ժողովրդավարության եւ մարդու իրավունքների կենտրոնի բացման մասին (ՍԱԿ-ի հայաստանյան ներկայացուցչության շենքում): Հոկտեմբերի 31-ին կենտրոնի տնօրեն Վլադիմիր Մովսիսյանը հրավիրել էր առաջին մամուլ ասուլիսը: Ներկայացվեց, որ կենտրոնի հիմնական նպատակն է Հայաստանում մարդու իրավունքների մասին գիտելիքների տարածմամբ նպաստել իրավական ոլորտի ստեղծմանը: Իրավական ոլորտը, այսինքն՝ ոլորտը, որը պարտ է համարում պաշտպանել իր հաղորդագիրների շահերը, իսկ հաղորդագիրները հարգում են սեփական ոլորտի օրենքները: Մարդու իրավունքները՝ բաց մեծ դաշտ են ներառում: Բայց չկան մեկուսացված իրավունքներ եւ առանձին վերցրած պարտավորություններ: Կենտրոնն իր խնդիրն է համարում պաշտպանել մարդու իրավունքները նույն մարդուն իր իսկ իրավունքները տովորեցնելով: «Մեր Սահմանադրության հիմքերը համապատասխանում են մարդու իրավունքների միջազգային չափանիշներին»: Պարզ դարձավ, որ գործառական նպատակներ կենտրոնը չի հետապնդում, այսինքն՝ կունենա ավելի ակտիվիստական, գրասենյակային գործելակերպ: Ինչպես պարոն Մովսիսյանը հայտարարեց, այդ նպատակի համար կան այլ կազմակերպություններ: Իր գործունեությամբ կենտրոնը կապացուցի, որ հաղորդական կազմակերպություն չէ եւ չի ունենալու որեւէ քաղաքական կողմնակալություն: Հեռանկարում միտում կա վերածվել կառավարական դիվանագիտական կառույցի: Լրագրողները հուսացին, որ համանման կառույցներն այլ երկրներում, ընդհակառակն, ավելի գործառական խնդիրներ են իրականացնում:

Այսօր կենտրոնը ֆինանսավորում է ՍԱԿ-ը, հիմնականում զարգացման ծրագիրը եւ փախստականների հարցերով զբաղվող հանձնախումբը: Ֆինանսավորելու նախադասությունը հանձն է առել Նորվեգիայի կառավարությունը: Բանակցություններ են վարվում ֆրանսիական իշխանությունների հետ: Առաջիկայում կենտրոնը բյուջեի խնդիրներ չի ունենա: Ծրագրվում է կենտրոնի աշխատակիցների վերապատրաստման դասընթացներ կազմակերպել այն երկրներում, որտեղ ժողովրդավարության եւ մարդու իրավունքի հարցերն ամուր հիմքերի վրա են դրված:

Կենտրոնին նվիրաբերվելու է մեծ քանակությամբ գրականություն: Գրադարանը բաց կլինի բոլորի համար: Պարոն Մովսիսյանը կարեւորագույն խնդիրներից համարեց գրքերի բարգմանության եւ հրատարկման կազմակերպումը: Կենտրոնի իրավաբանը շաբաթական մեկ անգամ խորհրդատվական ծառայություն կմատուցի ցանկացողներին: Մինչեւ տարեվերջ, առաջիկա երկու ամիսներին կենտրոնը նախատեսել է 4 միջոցառում: Նոյեմբերի 6-ին Երեւանի պետական համալսարանում կանցկացվի մարդու իրավունքների մասին սեմինար-խորհրդակցություն: Եթե գտնվեն ուսանողներ, ովքեր իրենց հուզող բեմաների մասին կներկայացնեն ռեֆերատներ, նրանց կտրվի հատուկ սերտիֆիկատ, նրանք հավաքման մեջ կլինեն կենտրոնում, հետագայում կդարձուվեն վերապատրաստման, նրանց համար կնշանակվեն հատուկ կրթաթոշակներ, իսկ բուհն ավարտելուց հետո կարող են աշխատանքի տեղավորվել ժողովրդավարության եւ մարդու իրավունքների կենտրոնի համակարգում:

Պարոն Մովսիսյանն անդրադարձավ նաեւ իր պաշտոնական այցին Շվեյցարիա, որ մեկնել էր ՍԱԿ-ի փախստականների հարցերով զբաղվող հանձնակատարի հրավերով մասնակցելու 41-րդ նստաշրջանին: Ժնեւում նա հարց բարձրացրեց զարգացման ծրագրերի ընդլայնման մասին: «Ի սկզբանե դեմ եմ եղել ամենօրյա մարդասիրական օգնություններին: Մենք ուզում ենք զարգացման ծրագրեր իրագործել Հայաստանում»:

Վ. Մովսիսյանը փորձում էր ընդհանուր եզրեր գտնել լրագրողների հետ՝ աշխատել փոխհամաձայնությամբ, ամենց սենսացիաների: «Ես չեմ խուսափում ոչ մի հարցից եւ ասուլիսի շրջանակներից դուրս պատրաստ եմ ցանկացած ժամանակ հարցազրույց տալ»:

ԱՆԻՏ ԳԱԼՈՍՅԱՆ.

Երկու երկրների հարաբերությունների առաջան դայծառ եմ տեսնում, քանի որ ՀՀ-ի եւ ԻԻՀ միջեւ համագործակցելու ցանկություն կա: առողջապահության բնագավառում համագործակցությունն առիթ է միմյանց փորձից օգտվելու, նոր ստեղծելու, բացը լրացնելու, երեկ Իրանի դեսպանատանը հրավիրված մամուլ ասուլիսում հայտնեց ԻԻՀ առողջապահության նախարար Ալի Ռեզա Մահդավիների հրավիրումը, դասախոսների, ուսանողների, մասնագետների փոխանակումը: Այսօր Իրանում ամենաբարդ վիրահատություններն են կատարվում շնորհիվ վերջին 7-8 տարիներին դպրոցավարված նեղ մասնագետների: Դեղորայքի 96.5 տոկոսն արտադրվում է երկրում, իսկ հեղափոխությունից հետո դեղագործական 50 մեծ գործարան է կառուցվել, որոնց արտադրանքը շուտով կասնվի Հայաստան.

ԵՐԵՎԱՆ

Վարակիչ հիվանդությունները կնվազե՞ն... համագործակցությունից

Մարանդին: ՀՀ առողջապահության նախարար Արա Բաբլոյանի այցին հետեւած այս այցելության հիմնական նպատակն էր ծանոթությունը հանրապետության առողջապահական բայն համակարգին, ինչպես նաեւ կնաջին երկու նախարարների կողմից ստորագրելիք փոխըմբռնման հուշագիրը: Պարոն նախարարը նկատեց, որ աշխատանքի մեծ դաշտ կա. Տարածաշրջանում վարակիչ հիվանդությունները սահման չեն ճանաչում, զանգվածային դպրոցասումներ են արել. 3 նահանգներում դողերոցքի (մալարիայի) դեպքեր կան. հատկապես վարակիչ հիվանդությունների կանխարգելման հարցում Հայաստանի վարձը կարող է օգտակար լինել: Մշակույթի եւ կենցաղի ընդհանրությունները հաշվի առնելով կարող են գիտահետազոտական համագործակցության մասին մտածել, ապաց դպրոն նախարարը: Իրանում բժշկական ուսումնարաններն ու հանձարարանը բարձրագույն կրթության նախաարարությունից հանձնվել են առողջապահության նախարարությանը: Նախարարությունն իր ակնհայտ առավելությունն արդեն ընդգծում է: ԱՄՆ-ում բարձրագույն կրթությունը խորացրած դպրոն Մարանդին կարեւորեց երկու երկրներում առողջապահական վիճակագրության հարցերը: Ասվեց, որ հանրապետությունում ինֆեկցիոն հիվանդությունների դեպքերի թիվը զարգացած է: Անտառահով խնդիրի համար բուժծառայությունն անվճար է, միջին խավը օգտվում է վճարումների մի մասը կատարելով, առաջիանները վճարելով:

ԱՌԱՏԻՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ.

Մեկկում է Էջմիածնի նոր հատակագիծ

Հայաստանում հիսունհազարանոցությունը պետական կոչ ընդունելու 1700 ամյակի առթիվ «Հայնախագիծ» բաժնետիրական նախագծային ինստիտուտում մշակվում է Էջմիածին հաղաքի նոր գլխավոր հատակագիծը:

ԱՅՍՕՐ

Թբիլիսիում կբացվի Մանթաշովի արձանը

Նոյեմբերի վերջին Թբիլիսիում տեղի կունենա հայ նշանավոր նավթարդյունաբերող, բարեգործ Ալեքսանդր Մանթաշովի արձանի բացումը, որին կմասնակցի նաեւ հայկական պատվիրակությունը:

ԱՅՍՕՐ

Խաղողագործները 1996 թ. 50 տոկոսով ազատվում են հողի հարկից

Ինչպես տեղեկացրեց ՀՀ գյուղատնտեսության եւ պարենի նախարարության տնտեսագիտության գլխավոր վարչության պետ Հովսեփ Բլոյանը, նախարարության առաջարկը 1996 թվականից խաղողագործներին 50 տոկոսով ազատել հողի հարկից, ընդունվել է կառավարության կողմից: Ըստ այդ առաջարկի, եթե խաղողագործները վճարում են հողի հարկ՝ կադաստրային արժեքի գուշ 15 տոկոսի չափով, որը հանրապետությունում խաղողի տնկարկների մեկ հեկտարից միջին հաշվով կազմում է շուրջ 26 հազար դրամ, ապա 1996 թվականից կնվազի՝ կազմելով 13 հազար դրամ:

ԱՊՐՈՊՐԵՍ

ԵՐԵՎԱՆ

Նախարարությունները բնակարանամուտի են պատրաստվում

Մոտ ժամանակներս կփոխվի հանրապետության մի շարք նախարարությունների ու գերատեսչությունների աշխարհագրությունը: Դրա մասին կառավարությունը համապատասխան որոշում է կայացրել:

Մասնավորապես, նախկին մթերումների նախարարության Նալբանդյան 48 հասցեում գտնվող շենքի նոր տերը կդառնա կրթության ու գիտության նախարարությունը, որի այժմյան շենքը (Խորենացու (Մարքսի) 13), ըստ տեղեկությունների, կհանձնվի բրիտանական դեսպանությանը: Առեւտրի նախարարության շենքում (Տերյան 69) կտեղավորվի սոցապ նախարարությունը: Վերջինիս նախկին տարածքը տրվում է ֆինանսների նախարարության տնօրինությանը: Բնակչության կենցաղասպասարկման միավորման նախկին շենքում (Մաշտոցի պող. 13ա, Թատերական գործիչների միության տան հետնամասում) բնակարանամուտ կտնի ՆԳՆ-ի անձնագրային վիզայի վարչությունը: Լեզվի պետական տեսչությունը կառավարության տնից կտեղափոխվի Խանջյան 13 հասցե, իսկ կենսաթոշակների ու զբաղվածության ֆոնդը մուտք կգործի «Հայաստան» միավորման շենք (Սախարովի, Նախկինում՝ Ազիզբեկովի) հասցեակ:

Ինչպես վերջերս մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Էդուարդ Զուլոյանը, հանրապետության ղեկավարությունը պատրաստակամություն է հայտնել Սիրիայի դեսպանության համար տրամադրել բնակարանային կոմունալ տնտեսության միավորման շենքը (Խանջյան 27):

Արտասահմանյան տուրիզմի գլխավոր վարչության նախկին նստավայրը (Խորհրդարանի փող. 2) հանձնվել է «Միդլենդ» բանկին, եւ այստեղ արդեն երկու ամիս է ընթանում են վերանորոգման բուռն աշխատանքներ: այս առնչությամբ նշենք, որ բրիտանահայ ձեռներեց Վայլ Սանուկյանը գնել է Վռամշապուհ արքայի փողոցում գտնվող Երեւանի պատմության թանգարանի համար վերանորոգված շենքը (նախկին օրիորդաց վարժարան), ուր տեղավորելու է իր անձնական գրասենյակը: Ստացված գումարով, ինչպես հայտնել էր Երեւանի քաղաքապետարանի նախագահ Վահագն Խաչատրյանը, հնարավոր կլինի կառուցել մայրաքաղաքի թանգարանի համար հատուկ հարմարավետ շենք:

Իրազեկ

Մահացավ Անտոն Քոչինյանի այրին

Սեպտեմբերի 29-ին Երեւանում մահացավ Խորհրդային Հայաստանի նախկին «առաջին տիկին» Մարիա Օհանի Քոչինյանը: Նա 81 տարեկան էր, ծնունդով՝ գոմաձորցի (Սեւանի շրջան), կրթությամբ՝ բժիշկ: Երկար տարիներ աշխատել է Երեւանի հակաժանտախտային կայանում որպես գիտաշխատող: Մարիա Քոչինյանը հինգ տարով վերադրեց իր անվանի ամուսնուն՝ Անտոն Քոչինյանին, որը ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահն էր 1952-1966 թթ. եւ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարը 1966-1974 թթ.: Մարիա Քոչինյանը ամրեց շրջապատված իր զավակներով, թոռներով ու ծոռներով: Վերջերս հայտնի դարձավ, որ Քոչինյան ընտանիքը համաձայնել է վաճառել Չարենցի փողոցի 29 շենքի իր հարկաբաժինը ԳՅՀ-ի դեսպանությանը: Հանգուցյալի հուղարկավորության արարողությունը մարդաշատ չէր, այն անցավ միայն հարազատների մասնակցությամբ:

Տ. Լ.

ԴԱՐԱԲԱՂ

Ռոբերտ Քոչարյան. «Լրատվության միջոցները պետք է նպաստեն պետականության կայացմանը»

Սկիզբը էջ 1

Խոսքը առաջին հերթին վերաբերում է ազգա-քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ բարոյա-հոգեբանական այն երկակի կացությունը, երբ նախ իրավունք չունենք անտեսել հակառակորդի կողմից դատարանական գործողությունների վերսկսման հավանականությունը, հետեւաբար պետք է անընդհատ հաշվի, որոնցի անհրաժեշտ մակարդակի հասցվի հանրապետության պաշտպանունակությունը եւ առաջ հաշվի առնելով ԼՂՀ ավերված տնտեսության վերականգնման ու զարգացման նախադրյալների ստեղծման անհրաժեշտությունը, հնարավորին չափ արագացնենք, առաջնավոր դարձնենք իրականացվող սոցիալ-տնտեսական բարեփոխումների, շուկայական հարաբերությունների անցման գործընթացը:

Նման դիրքորոշումներում, ընդգծեց Ռ. Քոչարյանը, հույժ կարեւոր է առանձնացնել ու տարբերակել գործընթացի առաջնահերթ ուղղություններն ու խնդիրները, որոնց մեջ բնականաբար երկրորդական նշանակություն չունի մարդկանց բարոյա-հոգեբանական վիճակը, որի ճիշտ ձեւավորման գործում լուրջ անելիքներ ունեն լրատվության մարմինները:

Ռոբերտ Քոչարյանը դատապարտեց լրագրողների տարաբնույթ հարցերին:

Փաստաբան Ռ. Սահակյանը հրաժարվում է իր պաշտպանյալից, որի իրավունքը սակայն չունի

Սկիզբը էջ 1

Ամբաստանյալը ընդում էր, որ մեկուսարանում ինքը ճնշումներ է ասել ենթադրյալներին, սակայն դա անընդունելի է եղել եւ ենթադրյալները դարձրել են իրենց տեսակետը: ՀՅԴ-ի հանձնարարությունն էլ կատարել, որն ամբաստանյալը չի ընդունել: «Ես զգում էի, որ ինչ-որ բան է սարքվում», հայտնեց նա դատարանում: Հայաստանում տեսնված իր գործունեությունը նա արդարացրեց աշխատանքը բացելով: Իր վարձու բնակարանից առգրավված ծրարի գոյությունը չժխտեց, հայտնեց, որ այն ընկերն է հանձնել վակ վիճակում, իսկ ինքը բովանդակությանն անծանոթ է: Նախաքննության նյութերով ծրարում եղել է տրգիր էջերով կարդայ տետր, որի արաքին էջին գրված է եղել «Դրո» կառույցի բացատրություն. 1992 թ., Երեւան», ինչպես նաեւ «Թոդի 1» տպագրության գնդակցագրեր, ինչպես նաեւ «Դրո» կառույցի անդամների հարցաթերթիկներ, մականուններն ու ծածկագրեր, որոնք հայտնաբերվել են 94 թ. դեկտեմբերի 12-ի խուզարկության ժամանակ: Մինչդեռ, ինչպես նշեց ամբաստանյալը, դեկտեմբերի 4-ի հարցաքննության ժամանակ արդեն նրան սպիտել են ցուցմունքներ տալ Հրանտ Մարգարյանի դեմ, բայի մի կտորի վրա գրելով վերջինիս կողքը:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ թաս Ա. Հարմատայանի, ինքը ձերբակալվել է 94 թ. դեկտեմբերի 3-ին (այդ է հաստատում նաեւ տեսաժապավենը), իսկ 4-ին նրանից բացատրություններ են վերցրել, սակայն արձանագրությունն մեջ նրա ձերբակալման ամսաթիվը նշված է դեկտեմբերի 5-ը: Բացի այդ, գործից բացակայում է նաեւ դեկտեմբերի 4-ի բացատրագիրը, որի տակ, ըստ ամբաստանյալի, ներկա գտնվող անձինք ստորագրել են: Վերջերս հետաքննությունն ընդհատվեց փաստաբան Մարինե Հալաբյանի առաջարկով, որն իր պաշտպանյալ Հովիկ Մկրտչյանին հարցաքննությունը նախադատաստանի համար նախապատրաստելու հանձնարարեց:

Ս. Դ.

■ *Ուշադրություն*: «Ազգի» երեկվա համարում «Ընդդիմություն 1995 թ. աշուն» հոդվածի վերջին պարբերության առաջին երկու տողը կարդալ այսպես. «Ի դիտավ ընդդիմության պետք է ասել, որ Դաշինքը չորոշեց իշխանափոխության «հայկական տարբերակը», այնուհետեւ ինչպես տեսնում՝

ՌԱՍԿՈՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ
Հրատարակչության եւ տարի
Պիտակներ եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Խմբ 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱՍՈՆ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՍԿԵԼ ԴԻԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային
ծառայություն / 581841
Ոճը եւ տարածքները ՊՈՒԵԼ ԴԱԼԱԲԵՍԻՆ
Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգին» դարձյալ է
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ՄԵՂՐԻ

Ազգային բանակի օրինակելի զորամասը

Մեղրու շրջգործկոմի նախագահի առաջին տեղակալ Վազգեն Բալասանյանի հետ զրույցի ժամանակ ակնարկեցի, թե ցանկանում եմ լինել նաեւ Ազգային բանակի տեղի զորամասում. «Պաշտպանության նախարարությունից թույլտվություն բերե՞լ եմ, հարկ համարեց տեղեկանալ զրուցակիցս, առանց հատուկ թույլտվության գնդապետ Ղեւոնդ Հովհաննիսյանը հազիվ թե ձեզ ընդունի, զորամաս մտնել էլ չի թույլատրի»: Անհոգաբար թոթվեցի ուսերս: Նախարարությունից թույլտվություն չունեի, բայց չէի հավատում, թե այդման երկար ճանապարհ կտրելուց հետո հրամանատարը, ինչման էլ խիստ մարդ լինի, կհրաժարվի ինձ ընդունել: Սակայն հետագա օրերին լավատեսությունս համարյա թե փոխվեց հուսահատության, տարբեր առիթներով, տարբեր խոսակցությունների ժամանակ շոշափվում էր գնդապետ Ղեւոնդ Հովհաննիսյանի անունը, եւ անփոփոխ ընդգծվում էր նրա խստապահանջությունը, բծախնդիր օրինապահությունը, զինվորական կարգ ու կանոնին հետեւելու մոլեռանդությանն հասնող վարքագիծը:

Ռազմ էի հայտնվել. հիանալի կահավորված տիպոնայով. ոչի վրա Եղիշեի տղան էին. «Շնորհալու մայր ման է. խնայելու մայր անմահություն»: Տիպոնայի դիմացի եղարակ դպրոցն. ողջոյ գնով եւ իրարից հավասար հեռավորության վրա. մեր դեսլեզի զինանշանի հատեսնությամբ կտրված էին հայոց դպրոցության ու դպրության բոլոր նշանավոր դեմքերի ու զորավարների դրծնակրի, դրվագազարդ դիմանկարները: Սկսեցի դիտել Արտաշես Առաջին, Տիգրան Մեծ, Վարդան Մամիկոնյան... Ակամա ձեռս գրպանս տարա ծխախոտս հանեցի. ու դեռ չէի կոչրել, մոտեցավ սպայական հմտագգեստով հմտակրեցի մի երիտասարդ.

– Ներեցեք, հորեղբայր, մեր զորամասի տարածքում ծխելն արգելված է:

Ուզում էի ծխախոտս տեղը դնել, երիտասարդը նեկայացավ.

– Հրամանատարի բիլոնցի գնով տեղակալ Ռոմիկ Ամիրխանյան: Մեզ մոտ ծխելու համար հատուկ տեղ է սահմանված, ես էլ եմ ծխող, գնանք միասին ծխենք...

Այդպես ծանոթացա այդ հաճելի, դրատասական սպայի հետ, եւ նրա ողեկցությամբ էլ շրջեցի ողջ զորամասում. եղա սպայակույտի շենքում, ճաշարանում, զորանոցներում, նոյարաններում, հանգստի սենյակներում, մարզահրապարակում. նույնիսկ հրամանատարի առանձնասենյակում, որ, մեջբերես, առիթ ունեցա ծանոթանալու Ղեւոնդ Հովհաննիսյանի հետ. զրուցեցի բազմաթիվ զինվորների ու սպաների հետ: Այդ ամենի մասին դրամեր չափազանց մեծ տեղ կզբաղեցնեն, ուստի նշեմ ամենաընդհանուր տպավորություններս: Զորամասը նախնատաց այնքան էր ընկնում բառացիորեն ֆրեսյական մահրությամբ: Շարահրապարակում, մոդրդրախոսակցական լեզվով ասած, յոդ լցնեիր, կհամբարեր: Զինվորական ճաշարանը այնքան լավ էր կահավորված, այնքան մաքուր ու ճաշակով էին սեղանները դրված անանունները ու սպասքը, որ դրանով կրեիր առաջնակարգ ռեստորանին: Մի անկյունում դաշնամուր կար. հատուկ ծաղկազարդ սեղան, որի վրան դրված էր. «Շնորհավորում ենք ծննդյան օրդ»: Ուրախ բացատրեց, որ այդ սեղանն նատում են միայն այն զինվորները, որոնց ծննդյան տարելիցն է լրանում. հատուկ նշում են, որ ախտանում... Երկրորդ այրի զարնող բոլոր անխտիր բոլոր զինվորների ու սպաների հանելի արտաքին տեսքն էր: Ով զինվոր է եղել, ինձ կհասկանա. այստեղ ճմրթված հագուստով, որկված կոճակով կամ ոչ ծյունաճերմակ եռաբաժիվով ոչ մի զինվոր չկար, եւ դա աղեն ոչ այնքան արտաքին տեսքի, որքան կարգապահության անկասք վկայություն է:

Հանկարծ կողենայի ընդգծել խելացիորեն մտածված եւ գեղեցիկ ձեւավորված ամենաբազմազան ցուցափեղկերի մասին. որի համար դրվատանքի խոսք ոչիչ ասել հրամանատարի տեղակալ Սարգիս Քաջոյանին: Սոպարակույտի շենքում. այլոր, դրանք ամենուր են, այրի զարնող տեղերում, եւ վերաբերում են զորամասի դրամությանը. հանրապետությունում... Ցեղասպանության գիտակցության կայացման գանազան դրամական դրվագներին, զինվորական գործին, մարտական դրատրաստության բարձրացման առարկա խնդիրներին, նույնիսկ բժշկությանը: Հատուկ խնամով են արված հայ ազգային ազատագրական դրայքարի հերոսների Արաբոյի, Անդրանիկ Զորավարի, Աղբար Սերոբի, Գեղարդ Չաուշի եւ մյուսների դիմանկարները, որոնց կողքին իրենց արժանի տեղն են գրավում մարշալ Հովհաննես Բաղրամյանը, ծովակալ Հովհաննես Իսակովը, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանը եւ Հայրենական մեծ դրատերազմի այլ հայ հերոսներ: Մի հատուկ ցուցափեղկ նվիրված է մեր հայրենիքի սահմանների դրատրաստության մարտերում զորամասի տված զոհերին: Նրանք 29-ն են, անմահացած դրատասելիներ ու երիտասարդներ, որոնց լուսանկարներին նայելիս սիրտ կծկվում է ցավից եւ տարբեր ակամա մռմնջում են. «Ծող չմեռնա այս տարը. Տեր Աստված, թող խաղաղություն լինի...»: Եւ որդեգի լինի, հարկավոր է ունենալ ոմեղ Ազգային բանակ, մարտունակ զորամիավորումներ: Միմիայն այդ դեղում բշնամին չի հանդգնի փորձարկել մեր ամրությունը: Իմ տպավորությամբ, այստեղ դա շատ լավ են գիտակցում: Եւ ջանք չեն խնայում զինվորներին վարժեցնելու, մարտական գործի վարդեներ դածնելու համար: Համենայն դեպս, դրատական չէ, որ այս զորամասը անվանական դրոշ ստացած առաջին միավորն է մեր Ազգային բանակում. եւ դրանով հրարտանում էին բոլոր զինվորից մինչեւ հրամանատար: Ես տեսա այդ դրոշը, կողքին զգաստ կանգնած ժամապահով, եւ մտածեցի, որ հազիվ թե հետ է եղել այն նվաճելը: Հասնեայն դեպս, զորամասը ռազմատեխնիկական ստուգումների ժամանակ անփոփոխ արժանանում է «լավ» գնահատականի, իսկ դրա եւ տեսում անդադրում աշխատանք է, վարժություն ու հրհնք: Ճշմարիտ է, ավագ լեյտենանտ Վահագն Մուրադյանը դժգոհում էր, որ մեր դրոշներում վատ են զբաղվում երեխաների ֆիզիկական դրատրաստությամբ ու նախնական ռազմական ուսումնամբ, ինչի հետեւանքով հարկ է լինում լրացուցիչ ջանքեր բանկել. «մինչեւ զինվոր լիարժեք զինվոր դառնա», տակայն այդ հանգամանքը, ինչպես երեւում է, այստեղ էական դեր չէր խաղացել: Իրենք զինվորներն, ներին հոյարտությունն ունենին իրենց զորամասի համար. գոհ էին, որ այդպիսի տեղում են ծառայում: Ես հանգամանալից զրույց ունեցա տավուշցիներ Տիգրան Բեկլյանի, Էդուարդ Գեորգյանի, երեւանցիներ Արտաշ Տոնոյանի, Համլետ Մուրադյանի, Արտաշես Մովսիսյանի, շատ ավելի զինվորների ու սերժանտների հետ, եւ նրանք միաբերան ողջույն էին, որ իրենք մշտապես նորմալ սնվում են («Շաբաթական երեք անգամ մսով ճաշ ենք ուտում, ո՞ւմ տանը հիմա դա կա»), զորամասում նախկին բանակից այլանդակ բարքեր («դեդովշինա», «սատիկների» ու «սպագանների» հակամարտություն) չկան, հարգանք... Երկրորդ այրի զարնող բոլոր անխտիր բոլոր զինվորների ու սպաների հանելի արտաքին տեսքն էր: Ով զինվոր է եղել, ինձ կհասկանա. այստեղ ճմրթված հագուստով, որկված կոճակով կամ ոչ ծյունաճերմակ եռաբաժիվով ոչ մի զինվոր չկար, եւ դա աղեն ոչ այնքան արտաքին տեսքի, որքան կարգապահության անկասք վկայություն է:

Հանկարծ կողենայի ընդգծել խելացիորեն մտածված եւ գեղեցիկ ձեւավորված ամենաբազմազան ցուցափեղկերի մասին. որի համար դրվատանքի խոսք ոչիչ ասել հրամանատարի տեղակալ Սարգիս Քաջոյանին: Սոպարակույտի շենքում. այլոր, դրանք ամենուր են, այրի զարնող տեղերում, եւ վերաբերում են զորամասի դրամությանը. հանրապետությունում... Ցեղասպանության գիտակցության կայացման գանազան դրամական դրվագներին, զինվորական գործին, մարտական դրատրաստության բարձրացման առարկա խնդիրներին, նույնիսկ բժշկությանը: Հատուկ խնամով են արված հայ ազգային ազատագրական դրայքարի հերոսների Արաբոյի, Անդրանիկ Զորավարի, Աղբար Սերոբի, Գեղարդ Չաուշի եւ մյուսների դիմանկարները, որոնց կողքին իրենց արժանի տեղն են գրավում մարշալ Հովհաննես Բաղրամյանը, ծովակալ Հովհաննես Իսակովը, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանը եւ Հայրենական մեծ դրատերազմի այլ հայ հերոսներ: Մի հատուկ ցուցափեղկ նվիրված է մեր հայրենիքի սահմանների դրատրաստության մարտերում զորամասի տված զոհերին: Նրանք 29-ն են, անմահացած դրատասելիներ ու երիտասարդներ, որոնց լուսանկարներին նայելիս սիրտ կծկվում է ցավից եւ տարբեր ակամա մռմնջում են. «Ծող չմեռնա այս տարը. Տեր Աստված, թող խաղաղություն լինի...»: Եւ որդեգի լինի, հարկավոր է ունենալ ոմեղ Ազգային բանակ, մարտունակ զորամիավորումներ: Միմիայն այդ դեղում բշնամին չի հանդգնի փորձարկել մեր ամրությունը: Իմ տպավորությամբ, այստեղ դա շատ լավ են գիտակցում: Եւ ջանք չեն խնայում զինվորներին վարժեցնելու, մարտական գործի վարդեներ դածնելու համար: Համենայն դեպս, դրատական չէ, որ այս զորամասը անվանական դրոշ ստացած առաջին միավորն է մեր Ազգային բանակում. եւ դրանով հրարտանում էին բոլոր զինվորից մինչեւ հրամանատար: Ես տեսա այդ դրոշը, կողքին զգաստ կանգնած ժամապահով, եւ մտածեցի, որ հազիվ թե հետ է եղել այն նվաճելը: Հասնեայն դեպս, զորամասը ռազմատեխնիկական ստուգումների ժամանակ անփոփոխ արժանանում է «լավ» գնահատականի, իսկ դրա եւ տեսում անդադրում աշխատանք է, վարժություն ու հրհնք: Ճշմարիտ է, ավագ լեյտենանտ Վահագն Մուրադյանը դժգոհում էր, որ մեր դրոշներում վատ են զբաղվում երեխաների ֆիզիկական դրատրաստությամբ ու նախնական ռազմական ուսումնամբ, ինչի հետեւանքով հարկ է լինում լրացուցիչ ջանքեր բանկել. «մինչեւ զինվոր լիարժեք զինվոր դառնա», տակայն այդ հանգամանքը, ինչպես երեւում է, այստեղ էական դեր չէր խաղացել: Իրենք զինվորներն, ներին հոյարտությունն ունենին իրենց զորամասի համար. գոհ էին, որ այդպիսի տեղում են ծառայում: Ես հանգամանալից զրույց ունեցա տավուշցիներ Տիգրան Բեկլյանի, Էդուարդ Գեորգյանի, երեւանցիներ Արտաշ Տոնոյանի, Համլետ Մուրադյանի, Արտաշես Մովսիսյանի, շատ ավելի զինվորների ու սերժանտների հետ, եւ նրանք միաբերան ողջույն էին, որ իրենք մշտապես նորմալ սնվում են («Շաբաթական երեք անգամ մսով ճաշ ենք ուտում, ո՞ւմ տանը հիմա դա կա»), զորամասում նախկին բանակից այլանդակ բարքեր («դեդովշինա», «սատիկների» ու «սպագանների» հակամարտություն) չկան, հարգանք...

ՍՓՅՈՒՌՔ

Մայլե Մելքոնյան. Վիզալիացի կինը՝ Հայաստանի խոսնակ

Վիզալիայում մեծացած, Ճաղոնիայում աղրած հայազգի Մայլե Մելքոնյանը Ամերիկայի Հայկական համագումարում ներկայացնում է Հայաստանը: Իսկ դա նշանակում է՝ օրվա ընթացքում բազմաթիվ նամակներ գրել, հոդվածներ դասվիրել, տեղի մամուլում Հայաստանին վերաբերող նյութեր հավաքել եւ ուղարկել Երեւանի իր գործընկերներին: Նրան անհրաժեշտ է հետեւել մամուլում տպագրվող հոդվածներին եւ անհրաժեշտության դեպքում արձագանքել դրանց: Օրինակ, ասենք «Վաշինգտոն փոստում» կամ «Ուոլլ Սթրիթ Ջորնալում» տպագրվել են այս կամ այն կերպ հայերի շահերին հակասող հոդվածներ: Մայլեն դասրատում է սուր եւ տեղին դասասխաններ: Կամ՝ Սենատը Թուրքիային տրվող մարդասիրական օգնության արգելման հարցն է քննում: Մայլեն լուսաբանում է հարցը եւ կարճ նորություններ դասրատում:

Նա վերադարձել է իր արմատները: Գուցե նույնն էր զգացել նաեւ նրա կրտսեր եղբայրը՝ Սոնթ Մելքոնյանը, երբ որոշեց կամավոր մեկնել էր Ղարաբաղ: Երկու տարի առաջ, երբ Մայլեն դեռեւս աշխատում էր Ճաղոնիայում եւ դեռ ընդամենը հետաքրքրվում էր հայկական հարցով, 35-ամյա Սոնթեն զոհվեց Ղարաբաղում: Նրա մահը ինչ որ տեղ խթան հանդիսացավ, որպեսզի Մայլեն վերադառնի իր արմատները եւ, վերադառնալով Վաշինգտոն, սկսի Հայաստանին օգնելու իր գործունեությունը: 1991 թ.-ից սկսած, երբ Հայաստանը հռչակեց իր դեռեւանությունը, հայերի խորհրդանշական դարձած դայքարը ցեղասպանության ճանաչման եւ Հայ դասի համար ստացավ նոր որակ: Այժմ անհրաժեշտ էր գործել ավելի կոնկրետ հարցերի լուծման ուղղությամբ: Օրինակ, Թուրքիային հատկացվող 25 մլն դոլլար օգնությունը կրճատել եւ փորձել ավելացնել Հայաստանին առավող օգնության բաժինը եւ այլն: Այդ ուղղությամբ էլ գործում են Մայլեն եւ Ամերիկայի Հայկական համագումարը, մի քանի այլ կազմակերպությունների հետ: Վերջինս Կապիտոլ Հիլլում գործող երեք հայկական խմբերից ամենահայտնին է:

«Նրանք մեծ գործ են կատարում իրենց շահերը առաջ տանելու համար, ասում է դեմոկրատ Կելվին Դուլեյը, որի ընտրատարածքում շատ հայեր են ապրում, մենք նրանց մասին հաճախ ենք լսում»:

Մայլեն կապ է դահպանում ավելի քան 18 հայկական թերթերի, մեծ թվով կաբելային հեռուստաընկերությունների հետ, ինչպես նաեւ համագործակցում է հայկական հարցերով զբաղվող «House Caucus»-ի անդամներից 27-ի հետ:

Ինչեւէ, բավականին կարեւոր ու դատասխանատու մի գործ է առաջ տանում: Մաղթենք ուրեմն հաջողություններ այդ կնոջը, որ Ամերիկայում դարձել է Հայաստանի խոսնակը:

Հայերը Մոզդոկում

Պատմական վավերագրերը հաստատում են, որ Հյուսիսային Կովկասի բազմաթիվ բնակավայրերի ստեղծման, ռուսական կայսրության հարավային սահմանի ամրացնման եւ վայրի տափաստանի տնտեսական յուրացման գործում 18-րդ դարի սկզբից նշանակալի ավանդ են ներդրել մեր հայրենակիցները: Օրինակ, 1763 թվականի գարնանը հիմնված Մոզդոկ ամրոցի շինարարների մեջ էին Անդրկովկասի տարբեր կողմերից գաղթած 50 հայ ընտանիքներ: Մի քանի տարի անց, երբ արդեն կառուցվում էին համանուն քաղաքի բնակելի թաղամասերը, այդտեղ հայերի թիվն անցնում էր երկու հազարից: Նրանց հիմնական զբաղմունքները տարաբնույթ արհեստներն ու առեւտուրն էին, նաեւ ցորենի մշակումն ու գինեգործությունը: Հաստատված անցած դարասկզբից Մոզդոկահայերը կառուցում են հարմարավետ շատ առանձնատներ, կավի մշակման, կոշիկի արտադրության ֆաբրիկաներ, ներկատներ, ոսկերչական արհեստանոցներ, դարբնոցներ, գարեջրի գործարան, վաճառատներ եւ խորհրդատներ: Համայնքի միջոցներով եւ մեծահարուստների նվիրատվությամբ հայերը կառուցում են երեք եկեղեցի, դրանց կից բացում տղաների եւ աղջիկների դպրոցներ: Խորհրդային առաջին տասնամյակներում երկրամասում մեծ համբավ են վայելել Մոզդոկահայերի բաստրական եւ երգի-պարի խմբերը: Սակայն հետագայում, ինչպես ամենուր, ազգային փոքրամասնությունները զրկվել են մշակութային եւ կրթական ինքնավարությունից: Սակայն հին քաղաքում դեռ շատ բան է հիշեցնում հայերի ներկայության ու նշանակալի ավանդի մասին: Կենտրոնական փողոցներից մեկը կոչվում է Արմյանսկայա (Հայկական), որի մոտ հառնում է ռուս հավատացյալների տաճարինությանը հանձնված սուրբ Վարդան Մամիկոնյան եկեղեցին: Պահպանվում են նշանավոր հայերի մի շարք առանձնատներ: Դրանցից է Կիրովի փողոցում գտնվող Ուլիխանյանների երկհարկանի, հնաոճ դատարգամբով տունը:

– Այստեղ բնակվող հայերի ազգային ինքնագիտակցության արթնացմանը նպաստեց, որքան էլ զարմանալի թվա, Սոփատկի մարդակուլ երգչի շարժը, դատմում է Մոզդոկի հայ համայնքի «Արարատ» կազմակերպության նախագահ, տեղի մսի կոմբինատի տնօրեն Ռաֆայել Վարդանովը: Մոզդոկահայերն անտարբեր չէին կարող մնալ: Նրանց հանգանակությունների շնորհիվ մեքենաների մի քանի շարասյուներ օգնություն հասցրին ադեթի գոտի: Տասնյակ մարդիկ ցանկացան որդեգրել որբացած երեխաներին: Հավաքները դարձան հաճախակի, ընդլայնվեցին ինքնակվող հարցերի շրջանակները: Վերջապես ստեղծվեց «Արարատ» ընկերությունը, որը կոչված է կազմակերպելու, ուղղություն տալու Մոզդոկի 2300 հայերի մշակութային, լուսավորական ձգտումներին: Փորձեցին բացել հայերենի ուսուցման կիրակնօրյա դպրոց. չէ՞ որ մեր հայրենակիցների մեծամասնությունը ռուսախոս է: Սակայն մանկավարժի բացակայության դատճառով բարի նախաձեռնությունը կես ճանապարհին մնաց: Անդատճառ կշարունակենք այդ աշխատանքը: Կարելի է երաժշտախումբ ստեղծել, մեր երիտասարդներին սովորեցնել պարել ու երգել: Սակայն մտահղացումների իրականացմանը խոչընդոտում է տարածաշրջանի ռազմաքաղաքական կացությունը: Ռազմական դատարանային քաղաքի կարգավիճակում է Մոզդոկը, այն կտրած է Չեչնիայից: Հուսանք, որ շուտով խաղաղություն կիջնի ամբողջ Կովկասին, մարդիկ կզբաղվեն բարի գործերով, իրենց առորյա հոգսերով: Հայերը Հյուսիսային Օսիայի այս քաղաքում օրինակելի ու ջանասեր քաղաքացիներ համարում ունեն, որոնց համար բանկ է բարեկամությունը ալան-օսերի, ռուսների եւ մյուս ազգերի ներկայացուցիչների հետ: Հուսով ենք, որ մոտ ապագայում հետ կստանանք սուրբ Վարդան Մամիկոնյան եկեղեցին, ռուսները կառուցում են իրենցը, աշխույժ կապեր կստեղծվեն մայր հայրենիքի հետ, մեր հայրենիքը կապրի իր ուրույն ազգային նկարագրով:

Մոզդոկահայերը Ռաֆայել Վարդանովին իզուր չեն կարգել իրենց «առաջնորդ»: Կաղզվանի գավառի Կեղտ գյուղացու որդին մինչեւ ղեկավարը ընտրվելն էլ եղել է համայնքային կյանքի կիզակետում: Օգնել է, ով օգնության կարիք է ունեցել, խորհուրդ է տվել ճանապարհից հեղվողին, առաջինը շնորհավորել հայրենակցի հաջողությունը եւ բոլորին խրախուսել ու դատանքել, որ բանկ գնահատեն հայի արժանապատվությունը, չմոռանան նախնյաց անունը բարբառը: Նրան հարգում են բազմազգ քաղաքի բնակիչները: Այս տարվա գարնանը տեղի ունեցած ընտրությունների ժամանակ ձայների բացարձակ գերակշռությամբ ընտրվեց Հյուսիսային Օսեթիայի Հանրապետության Գերագույն խորհրդի դատգամավոր:

ՌՈԲԵՐՏ ՍԻՄՈՆՅԱՆ,
Մոզդոկ-Երեւան

digitised by A.R.A.R.@

Կարլեն Դալլաքյան. Պետության խաղաքաղաքականությունը եւ տահը երբեք անհատների հետ չեն կապվում

ՀՀ ԳԱԱ Տեղեկատվություն բանգարան-ինստիտուտի սփյուռքահայ համայնքների բաժնի վարիչ Հայաստանի Թեմերյան մշակութային միության Կենտրոնական վարչության անդամ Կարլեն Դալլաքյանի (1961-63 թթ. աշխատել է ՀԿԿ Կենտկոմի աշխատակազմում, այնուհետեւ զբաղվորել է կառավարությանն առընթեր եկեղեցական գործերի խորհուրդը. 1971-75 թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի բաժնի վարիչ, ապա մինչեւ 1985 թ. Կենտկոմի քարտուղար. 1985-91 թթ. Սփյուռքահայության հետ կապի կոմիտեի նախագահ) հետ հարցազրույցը սոսկ հաստատեցին են երեք ժամ տեւած հետաքրքիր ու բահեկան զրույցի. որ երեւան է հանում կոմունիստական վարչակարգի օրոք ազգային հանրապետությունների նկատմամբ կենտրոնի վարած երկդիմի քաղաքականությունը. Փորձ է արվում ստվերային այդ հարաբերություններում մեկ անգամ եւս սահմանել Հայաստանի կոմկուսի դերն ու տեղը. որը հատկապես վերջին երեսուն տարվա ընթացքում հայ ազգային գաղափարախոսության որոշ հարցերի լուծման ասպարեզում դրսեւորել էր իրապես մոտեցում

– Պարոն Դալլաքյան, դուք որպես Խորհրդային Հայաստանի պետական ու կուսակցական երկարամյա գործիչ, միշտ էլ փորձել եք ազգային հարցի հետ, աշխատանքի բերումով այն եղել է ձեր գործունեության հետաքրքրությունների շրջանակում: Կոմկուսի «լենինյան ազգային քաղաքականությունը», որ առաջադրում էր ազգերի ու ազգությունների հավասարություն, ազգերի ինքնորոշման՝ ընդհուպ մինչեւ անջատվելու եւ ինքնուրույն պետություն կազմելու իրավունքի ճանաչման, ազգային լեզուների եւ մշակույթի ազատ զարգացման սկզբունքներ, իրականում ինչպե՞ս էր իրագործվում Խորհրդային Միության տարածքում:

– Անշուշտ, կենտրոնը վարում էր մի քաղաքականություն, որի հիմքում ընկած էր ազգերի ձուլման հեռահար նպատակը: 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռուսական կայսրության մեջ մտնող շատ ազգեր բացարձակ հետամնաց էին՝ թե տնտեսապես, թե մշակութային առումով: Եթե վերջինը հայերին չէր վերաբերում, ապա շատ ազգեր չունեին նույնիսկ իրենց գիրն ու գրականությունը, եւ անհնարին էր անմիջապես կիրառության մեջ դնել ազգերի ձուլման մարքսիստական լոզունգը: Ձուլման ճանապարհին անհրաժեշտ էր անցնել մի մեծ շրջափուլ, որը նախ պիտի նպաստեր ազգերի զարգացմանը: Հենց այդպես էլ դրվեց խնդիրը. առանց զարգացման ազգերի ձուլումն անհնար է: Ազգային հարցի սկզբունքներից մեկը, եթե հիշում եք, ուներ 2 կետ՝ զարգացում, ծաղկում եւ մերձեցում: Անշուշտ, ազգերի մերձեցումը շատ հաճախ արհեստական նորեն արագացվում էր, բայց իբրեւ կանոն հանդիպում էր ինքնաքաշ ոչնչական դիմադրության եւ տալիս էր հակառակ արդյունքը: Ինչ վերաբերում է առաջին կետին (ազգերի ծաղկում, զարգացում), ապա նրա գործադրման շնորհիվ էր, որ բոլոր հանրապետություններն ապրեցին վիթխարի տնտեսական (Հայաստանի օրինակով դա առանց դժվարության կարելի է ապացուցել) եւ մշակութային բռնիք գիտություն, կրթություն, արվեստ եւ այլն:

Այս կողմից կենտրոնը բոլոր հանրապետություններին փորձում էր զրկել ինքնուրույն քաղաքականության գործունեությունից, հատկապես միջազգային ասպարեզում: Երբ օրինակ Հայաստանին կամ հայությանը վերաբերող հարցերը լուծվում էին, դրանք արվում էին չխորհրդակցելով ոչ միայն ժողովրդի, այլեւ ղեկավարության հետ: Այդպիսի տասնյակ, հարյուրավոր փաստեր կարելի է բերել, երբ ընդունվել են հայոց շատերը շոշափող զանազան պայմանագրեր, երբ արվել են բազմաթիվ հայտարարություններ, առանց հայությանն այդ մասին հարցնելու: Գաղտիարախոսության ամբողջ ոլորտը նույնպես վերահսկում էր կենտրոնը՝ մտքով, հրատարակչական գործ, կիրառատպություն...

Պատերազմից հետո ստեղծվեց, այսպես կոչված, երկրորդ քարտուղարների ինստիտուտը. բոլոր հանրապետությունների կոմկուսի Կենտկոմներում կենտրոնը երկրորդ քարտուղարներ էր նշանակում ազգությամբ ռուս կուսակցական պատասխանատուներ: Մեզ մոտ դա եղավ 68 կամ 69 թվականին, բայց մյուս հանրապետություններում շատ ավելի վաղ: Հայաստանը վերջինն էր՝ ... որ այդ գիշերանը դնաց: Այս ինստիտուտը, ըստ էության, անվստահություն էր հարուցում ամբողջ ազգի նկատմամբ եւ գոնեկապում էր կենտրոն-հանրապետություն հարաբերությունը:

Հոկտեմբերյան հեղափոխությունը տեղի ունեցավ ազգային ազատագրական եւ բանվորական շարժումների դաշինքի հռչակմամբ, սակայն այդ դաշինքը մոռացվեց հաջորդ օրը: Սահմանադրության մեջ գեղեցիկ գրվեց ինքնուրույն պետությունների, այդ պետությունների միության մասին, բայց ինքնուրույնություն բացարձակ գոյություն չուներ: Եւ եթե Խորհրդային Միությունը փլուզվեց, պատճառն, ըստ իս, առաջին հերթին այն էր, որ չլուծվեց ազգային հարցը, այսինքն՝ ինքնուրույն ազգ-պետությունների խնդիրը: Անշուշտ, այլ պատճառներ էլ գոյություն ունեին: Ի դեպ, ասեմ, որ ԽՄԿԿ-ն այդպես էլ չգիտակցեց, իր վերջին համագումարում նույնիսկ փորձ չարեց հասկանալ, որ երկրի կործանման առաջնային պատճառն ազգային հարցն էր:

– Հայտնի է, որ խորհրդային շրջանում երկար ժամանակ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման պատմությունը գտնվում էր «փակի» տակ եւ ամեն ինչ արվում էր այն շրջանցելու կամ փաստերը խեղաթյուրված ներկայացնելու համար:

– Առաջին 40 տարիների համար իրոք եղելություն էր բացարձակ ու շատ կոպիտ խեղաթյուրումը, երբ բուն ազատագրական պայքարը համարվում էր անարդարացի ու անտեղի: Ազատագրական պայքարի մասնակիցները (անհատ հերոսներ, կուսակցություններ, կազմակերպություններ) դիտվում էին որպես հայ ժողովրդի նկատմամբ չարագործներ: Այս ամենը վերանայվեց, բեւ ոչ հիմնովին, 50-ական թվականների վերջերից: Այլեւս հայ ժողովրդի պատմության ձեռնարկներում չէր գրվում, թե ազատագրական պայքարը սխալ է եղել: Բնականաբար, պահպանելով հատկապես Դաշնակցության վերաբերյալ որոշ նախկին գնահատականները, այլեւս չէր նշվում, թե նա հայ ազատագրական պայքարի դեմ հանցագործություն է կատարել, սակայն ասվում էր, որ այդ պայքարը տարել է սխալ ուղիով: Միանգամայն սխալ էին նրա եղբ ոչ ռազմավարական, ապա մարտավարական լուծումները, եւ նա ժողովրդին ոչ թե նախապատրաստել է ընդհանուր ապստամբության, այլ կազմակերպել է, այսպես կոչված, պարտիզանական ելույթներ կամ պատժամիջոցներ այս կամ այն բուրժուական կամ ֆեոդալական ցեղի դեմ, կամ եվրոպայի ուշադրությունը գրավելու համար բանկ է գրավել եւ այլն: Մինչ վերջերս էլ այդ կարծիքն էր տիրում պատմագիտական պատմագիտության մեջ, իսկ մնացած սկզբունքային հարցերը վերանայվեցին:

– Երբ մեր հարեւանները Մոսկվայի թողտվությամբ իրենց պատմությունն էին սրբագրում կամ, ավելի ճիշտ, նոր պատմություն շարադրում, ինչպիսի դիրք էր գրավել Հայաստանի կոմկուսը:

– Ես չեմ հիշում, որ դրա վերաբերյալ Հայաստանի կոմկուսը պաշտոնական որեւէ որոշում ընդունած լինի: Բայց թե կոմկուսի շարքային անդամները, թե Կենտկոմի աշխատակիցները բացմիցս են Մոսկվայի ուշադրությունը հրավիրել այդ փաստի վրա: Բերեմ մի օրինակ. 1972 ին Բաքվում փաստագրական մի ֆիլմ նկարահանվեց, որը կոչվում էր «Ազերբայջան... Ազերբայջան... Ազերբայջան...»: Ֆիլմի սկզբում մի հարցում կար՝ խորհրդային իշխանությունը ի՞նչ է տվել Ադրբեջանին: Ֆիլմի վերջին մակագրերում ասված էր՝ խորհրդային իշխանությունը Ադրբեջանին վերադարձրեց իր դարավոր հին պատմությունը եւ նրա ազգային մշակույթը դարձրեց հանրապետական սեփականություն: Ֆիլմը ... ոչ պակաս: Ամբողջ ֆիլմը շնչ... էր գոեհիկ նացիոնալիզմով: Խ... արված էր պատմությունը: Հայ նյութական մշակույթը ներկայացված էր որպես արաբեջանական եւ այլն եւ այլն: Այն ժամանակ ես Կենտկոմի պրոպագանդայի բաժնի վարիչ էի: Երեւանում էր գտնվում ԽՄԿԿ Կենտկոմի պրոպագանդայի բաժնի աշխատակից Կոստեգկին: Նրան հրավիրեցի ֆիլմը դիտելու: Սարսափեց այդ կեղծիքից: Անհապաղ հեռաձայնեց իր ղեկավարին՝ Սորոզովին: Վերջինիս կարգադրությամբ ֆիլմը հանվեց ոչ միայն Խորհրդային Միությունից, այլեւ Ադրբեջանի կինոպրոկատից:

Թբիլիսիում տեղի էր ունեցել արվեստին նվիրված մի գիտաժողով: Ադրբեջանցիները հերթական անգամ ելույթ էին ունեցել սադրիչ զեկուցումներով՝ իրենց արվեստին վերագրելով խայտառակ, վիճաբանորեն: Մեր գիտնականներից մի քանիսը եկան Կենտկոմ եւ առաջարկեցին արբեջանական այդ նենգափոխությունների դեմ հանդես գալ բերբերում: Հրավիրեցի գիտությունների ակադեմիայի փոխնախագահին եւ առաջարկեցի ստեղծել մի ծրագիր, ըստ որի, գիտական աշխատություններ գրել այդ կեղծիքների դեմ եւ հրատարակել օտար լեզուներով: Այսինքն՝ պատկերը տանել դեպի օրվա կյանք ունեցող բերբերի էջերում, այլ գիտական հիմնարար աշխատություններով: Ցավոք, եթե այդ աշխատությունները այսօր չկան հրատարակում, ապա մեղավորը հենց իրենք՝ գիտնականներն են (խոսքը գնում է 80-ական թվականների սկզբի մասին, երբ նման հրատարակությունների համար միջոցներ նախատեսված էին): Օրինակները բազմաթիվ են: Մեր քայլերը չէին արվում հրատարակվ, գոռում գոչյունով: Կենտկոմի ղեկավարությունը իր կարգին անում էր դիմադրվելու եւ մերկացնելու ադրբեջանական կեղծիքները:

Գնանք ավելի ետ: 60-ական թվականների կեսերն էին: Ես զբաղեցնում էի կառավարությանն առընթեր եկեղեցական գործերի խորհրդի նախագահի պատասխանը: Մի օր ինձ մոտ եկան մի խումբ ադրբեջանցիներ եւ առաջարկեցին փակել Երեւանի Նարիմանով փողոցում գտնվող մզկիթը, իբր հավատացյալներ այլեւս չկան: Սեղանին դրեցին իրենց համայնքի որոշումը: Հարցրեցի, թե իրենց ով է հրահանգավորել այդ քայլը կատարելու: Իրենք թե՝ ոչ ոք: Ասացի, եթե դուք եք որոշել, ապա ես այն պատասխան եմ: Գնացեք, մզկիթը ոչ մի դեպքում չի փակվի: Նրանց հավաքը պարզունակ էր: Երբ Երեւանում փակվեր այդ մզկիթը, ապա Բաքվի պատասխանը տասնապատիկ կլիներ:

– «Ազգը» երբեմն անգամ անդրադարձել է 1965 թ. Հայոց մեծ եղեռնի 50-ամյակը պետականորեն նշելու խնդիրներին: Հոդվածագիրները ուղղակի եւ անուղղակի հիշատակել են նաեւ ձեր անունը...

– Վոլոդյա Սահակյանի հոդվածի («Ազգ», 9 հունիս) բուն ոգին, որ Հայաստանի կոմկուսը իր քաղաքական ողջ գործունեության ընթացքում սատարել է մեր ժողովրդի առաջընթացը, պատշաճում եմ եւ ողջունում: 60 ականների սկզբին բուն եղեռնի եւ Հայ դատի նյութը ժողովրդի մեջ տարածվում էր՝ ոչ կոմկուսի ձեռամբ, այլ տարերային, ժողովրդական զարթոնքի սկզբունքով: Սակայն ես չեմ կարող հաստատել, թե Կենտկոմը, ինչպես պնդում էր Վ. Սահակյանի ընդդիմախոսը, դեմ էր այդ ամենին եւ արտաքին ճնշման տակ ա... կանում սփյուռքի հարցերով: Ամիսը երկու անգամ Չարոբյանն ընդունում էր ինձ եւ մի ամբողջ ինքնություն անցկացնում՝ ինչ կա Սփյուռքում, սփյուռքահայ մամուլում: Արդեն 1961 ի ապրիլին Չարոբյանը ինձ հարցրեց եղեռնի 50 ամյակի, սփյուռքում դրա նախապատրաստությունների մասին:

Սահակյանը գրում է, թե «1963 թ. կեսերին մեր նշանավոր գրող Հրաչյա Քոչարը եղավ Լիբանանում եւ Սիրիայում... Հ. Քոչարի այդ այցելության վերաբերյալ մեր հայտնի մտավորականներից մեկը մի հսկայածավալ ամբաստանագիր էր ուղարկել Կենտկոմ: Այդ հարցը քննարկվեց ՀԿԿ Կենտկոմի քարտուղարության նիստում: Հարցը պատրաստել էր եւ զեկուցեց Կարլեն Դալլաքյանը»: Այդ պիսի բան տեղի ունեցել է, բայց այլ կերպ: Քոչարը Լիբանանում եւ Սիրիայում եղավ 1960 թվականին եւ ոչ թե 1963 ին: Կենտկոմում հարցը քննարկվեց 1961 թ. հունիսի 30 ին: Եւ երբ քննարկվեց, Սահակյանը գրում է, թե Քոչարի մեծահոգի վերաբերմունքի շնորհիվ եւ իր խնդրանքով ամբաստանողին չպատժեցին: Այդպիսի բան չի եղել: Զրույցիս պատժվեց եւ շատ խիստ: Կենտկոմի բյուրոյի որոշմամբ ստացավ կուսակցական խիստ նկատողություն՝ վերջին նախազգուշացումով: 1963 ին ես արդեն Կենտկոմում չէի: 1962 ի դեկտեմբերի 30 ին ինձ հանեցին Կենտկոմի աշխատակազմից:

– Եւ ո՞րն էր պատճառը:

– 1962 ի սկզբին Հայաստան եկավ սփյուռքահայ նշանավոր գրող, հասարակական գործիչ, նախկին դաշնակցական Անդրանիկ Ծառուկյանը: Եւ ի զարմանս ինձ՝ հեռախոսազանգ: Հանդիպեցինք: Զրույցի վերջում ասաց, որ շատ է ուզում տեսնել Չարոբյանին: Հաջողացրեցի այդ հանդիպումը: Մեկ երեքով էինք, եւ ես գրեթե չէի խոսում: Զրույցը Հայաստանի եւ Սփյուռքի շուրջն էր: Անդրանիկը Չարոբյանին հարցրեց, թե ապագայում եղեռնի 50 ամյակն է, ի՞նչ է մտածում նա այդ մասին: Չարոբյանը ժպտաց եւ ասաց, որ ամեն ինչ էլ կլինի՝ հուշարձան, հրատարակումներ, միջոցառումներ, իսկ նա խաղաղասրտվել չի նշանակում միայն Հայաստանում, այլեւ՝ Մոսկվայում: Ի դեպ, ասեմ, որ Ծառուկյանը իր «Մեծերը եւ մյուսները» հուշագրության մեջ կողմնակի անդրադարձել է այդ հանդիպմանը՝ մի քանի էջ տրամադրելով Չարոբյանին, որի մասին նա արտակարգ ջերմությամբ եւ պատկառանքով է արտահայտվել:

Այդ հանդիպումից հետո ինձ հրավիրեցին մյուս ղեկավարները եւ զգուշացրեցին, որ ես կրկի հետ եմ խաղում: Եվ իսկապես 1962 ի վերջին հասիրների կրճատման պատճառաբանությամբ ինձ ազատեցին զբաղեցրածս պատասխանից: Բայց ես են բաղում եմ, որ իսկական պատճառներից մեկը հենց այդ էր. ինչու եմ ծառուկյանի եւ Չարոբյանի տեսակցությունը կազմակերպել առանց կենտկոմի որոշման, առանց պետանվտանգության կոմիտեի հետ համաձայնեցնելու:

– Ըստ ձեզ, ո՞րն էր Չարոբյանի՝ կուսակցական գործչի ամենակարեւոր ներդրումը Հայաստանի քաղաքական կյանքում:

– Հայրենիք-սփյուռք կապերը: 1961 թ. սեպտեմբերին տեղի ունեցավ Հայաստանի կոմկուսի հերթական համագումարը: Չարոբյանի զեկուցումը առաջինն էր հայ կոմկուսի պատմության մեջ՝ 1920 թ. ի վեր, որտեղ վերանայվեց սփյուռքի նկատմամբ Ա. Մյասնիկյանից եւ Աշ. Հովհաննիսյանից հետո եկող դոգման: Չարոբյանը տվեց գնահատականներ, որոնց կարեւորությունը շատերը չհասկացան: Որպես հայրենասիրական կուսակցություններ հնչակյաններին, ոմանք կավարներին տարանջատելով դաշնակցությունից, Դաշնակցությունն էլ տարանջատեց պարագլուխների եւ շարքայիններին: Այսինքն՝ արեց մի քայլ, որ ընդլայնում էր հայրենիք-սփյուռք կապերը: Սփյուռքի բերքերը Հայաստան մուտք գործեցին: Մեծ քափ ստացան փոխայցելությունները, նաեւ ներգաղթը: Այդ համագումարն ամբողջովին փոխեց վերաբերմունքը Սփյուռքի նկատմամբ:

Ես իմ գրքում գրել եմ, որ մենք միշտ ունեցել ենք մեր խաղի հատուկ կանոնը Դաշնակցության հետ: Մենք միշտ հայհոյել ենք, բայց ոչ թե այն բանի համար, որ ուզել ենք հայհոյել, այլ որ անհրաժեշտ էր հայհոյել, որովհետեւ խաղին մասնակցում էր երրորդ կարեւոր կողմը՝ Մոսկվան: Դա շախմատ էր Մոսկվայի հետ, որտեղ Դաշնակցությունը չէր երեւում, բայց Մոսկվային պետք էր հասկացնել, որ նա գոյություն ունի որպես ռեզերվային ֆիգուր: Բերեմ մի օրինակ, որ զավեշտ է հնչում: 1932 թ. ՀԿԿ Կենտկոմի անդամ Դանիել Շահվերդյանին Հունաստանում ասացին, թե նախապատրաստվում է Դաշնակցության համագումար եւ իբր այդ համագումարում Դաշնակցությունը որոշում է ընդունելու դադարեցնել հակախորհրդային պայքարը: Շահվերդյանը միանգամից պողոպատեցի է. «Մենք դա թույլ չենք տա»: Այդ քաղաքականությունը վերամշակվելով հասել էր մեզ: Բոլոր սկզբունքային հարցերը Չարոբյանից մինչեւ Դեմիրճյանն ընկած ժամանակաշրջանը, երբ ներկայացվում էին կենտրոն, կրում էին մի ծանուցում. եթե այս հարցերը չլուծվեն, Դաշնակցությունը նախաձեռնությունը կվերցնի իր ձեռքը:

– Ռուբեն Սաֆարյանը իր հոդվածում («Ազգ», 29 օգոստոս), երբ գրում է, թե կոմունիստական Գերագույն խորհրդի վերջին նիստերից մեկի ժամանակ Կենտկոմում բարձր պատշաճ գրված կոմունիստը ցավով խոստովանեց, որ Հայաստանի կոմկուսն ու նրա Կենտկոմը տեր չեն կանգնել Հայոց եղեռնին ու Հայ դատին, հավանաբար նկատի ունի ձեզ:

– Այո, Հայ դատի պատշաճավորությամբ Կենտկոմը երբեք հանդես չի եկել: Կենտկոմի ամենակարեւոր քայլը, որ արվել է երբեւէ, եղել է 1946 թ. փետրվարի 2 ին: Առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը Սունդուկյանի անվան պետական թատրոնի բեմում, իր ընտրողների հետ հանդիպման ժամանակ ելույթ ունենալիս շատ խիստ դրեց Թուրքիայում գտնվող հայկական հողերի հարցը, որոնք 1914 թ. սահմաններով եղել

digitised by A.R.A.R.@

էին Ռուսաստանի կազմում: Բայց նույնիսկ այդ ելույթում նա եղեռնի ու հայ դատի մասին չհիշատակեց: Ի դեպ, ասեմ, որ հայ դատ հասկացությունը որպես հաղորդական տերմին, նույնիսկ սփյուռքում, ավելի ուշ լայն շրջանառության մեջ մտավ: Հարությունյանն այդպիսի ելույթ չէր կարող ունենալ առանց Մոսկվայի համաձայնության: Դեռ 1945 թ. հունիսին Մոլոտովը երկու անգամ հրավիրել էր Մոսկվայում Թուրքիայի դեսպան Սարաջոգլուին եւ ուղղակի ասել՝ 1914 թ. սահմանները: 1945 թ. ամռանն ընդունվեց Հայաստանի օրհներգը (խոսք՝ Սարմենի): Այնտեղ կար այսպիսի մի տող՝ «Հայաստան՝ հայրենիք ողջ հայության»: Վատահ եղեք, եթե այդ տողերը գրվեին 1945-ից առաջ, հեղինակը Սիբիրում կհայտնվեր, որովհետեւ «Հայաստան՝ հայրենիք ողջ հայության» բանաձեւը մինչ այդ անընդունելի էր, չկար «դասակարգային» մոտեցումը: Անհրաժեշտ էր աղացուցել, որ ամբողջ հայության հայրենիքը Հայաստանն է, բայց նա իր փոքր տարածքով չէր կարող բավարարել այնտեղ ապրողներին, ուրեմն՝ վերադարձրեք հողերը:

Հարությունյանի ելույթը գլուխգործոց էր, կոմկուսի դասմության մեջ նման բան չկար 1921 թ. ի վեր: Կա մի դեպք, որի մասին հյուրը գիտեն: 1921-ին, երբ դեռ խորհրդային Հայաստանը նույնիսկ Անդրֆեդերացիայի մաս չէր կազմում եւ ծեւական առումով ինքնուրույն էր, Ալ. Մյասնիկյանի մոտ տեղի է ունենում հայկական բանակի գլխավոր շտաբի փակ նիստը: Զորականները դնում են հեռեւյալ հարցը. թուրքական բանակը Արեւելքում ոչ մի գինովոր չունի, բոլորը կռվում են հունական ճակատում: Հնարավորություն կա մեկ հարվածով գրավել հայկական հողերը: Խնդրում են Մյասնիկյանի հրահանգը, կառավարության որոշումը: Մյասնիկյանը, դասմում է ակնատեսը, դարձավ երկու մարդ՝ ազգային զգացմունքներով մտավորականը եւ պետական գործիչը մտածում էին ազգի ապագայի մասին: Զգաց մարդիկները բելադրում էին հանձնել, սակայն պետական գործի տրամաբանությունն այլ բան էր ասում հույները պիտի դարձվեն, որպեսզի հետեւ եվրոպան դաշտանում է թուրքերին: Թուրքական բանակը ոգողվելու է դեպի Արեւելք եւ նորից կգրավի 6 նահանգները, գուցե ավելին: Եվ նա մերժեց այդ առաջարկը:

Ես աշխատել եմ եւ մոտիկից ծանոթ եմ եղել շատ կուսակցական գործիչների հետ: Ով է ասում, որ Թովմասյանը, Բոյինյանն ազգասերներ չէին: Բոյինյանը բեւեռ այլի չէր ընկնում իր կրքվածությամբ, բայց գիտեր Հայաստանի բոլոր գյուղերը՝ հանդերով հանդերձ: Երբ եկեղեցական գործերի խորհրդի նախագահն էի, կաթողիկոսն ասաց, թե երկու ամերիկացի են եկել եւ ուզում են ձեզ այցելել: Ասացի՝ խնդրեմ: Եկան, առաջարկեցին վաճառել հայկական հին եկեղեցիներից մեկը, որը էր առ էր պիտի փոխադրեին եւ ԱՄՆ-ում վերականգնեին: Ասացին՝ նշանակեք գինը, մենք չենք սակարկի: Գնացի Բոյինյանի մոտ, պատմեցի: «Տղա ջան, ասաց նա, գնա էդ ֆռ ամերիկացոց ասա, որ անգամ մեր մարդկերին չենք ծախում: Եթե Ամերիկայում հայկական հնություն կա, թող իրանք գնահատեն, մենք կառնենք»: Պատասխանեց առանց մտածելու՝ գեղջկական անմիջականությամբ ու իմաստությամբ:

Պատմության անիվը պտտվում է եւ դալու է այն օրը, երբ նորից բարձրանալու է հայկական հարցը: Գրիգոր Հարությունյանի ելույթը միայն հայի խոսք չէր, այն պայմանավորված էր ռուսական հաղորդակցությամբ, երբ հայի եւ ռուսի շահերը համընկնում էին: Պետության հաղորդակցությունը եւ շահը երբեմն հատներ հետ չեն կաղվում: Սակայն հնարաքեությունից մինչեւ հիմա բոլոր դեկավարները՝ չնչին բացառությամբ, դաշնակ, կոմունիստ, թե հիշական, Հայաստանի շահով են շարժվել եւ պիտի շարժվեն: Այսօր ոչ մի դեկավար չի կարող ասել, թե իմ հողերը տվեք, որովհետեւ այդտեղ ուժ չունի, եւ պայմանները անհասանելի են: Սակայն պատմության անիվը, ինչպես ասացի, պտտվում է...

ԱՌԱՔԵԼ ՊԱՐԱՆՅԱՆ

Աշխարհից

Ամեն տարի շուրջ 100 հազար օտարերկրացիներ օրինական կարգով հաստատվում են Իրանական Իսլամական Հանրապետությունում, որոնցից ուսումնական նպատակներով՝ 1500-ից ավելի բարձրագույն կրթություն ստանալու նպատակով: Վերջերս բացահայտված նման մի գանգ մեկ տարում 1500-ից ավելի բարձրագույն կրթություն ստանալու նպատակով Իրանի տարածքում գտնվող ներգաղթյալներ: «Ինչպես բացատրեցին Իրանի Ներգաղթի կազմակերպության ղեկավարները, Իրանի Իսլամական Հանրապետությունը ներգաղթյալներին ապաստան է տրամադրում, հիմնվելով Ժնեւի կոնվենցիայի 1951 թվականի դրույթների վրա: Ներգաղթյալներին տրվում է ապաստան, նրանց ապահովագրում է բնակարանով, ինչպես նաեւ ֆինանսական աջակցություն: Ներգաղթյալներին տրվում է նաեւ աշխատանքի իրավունք: Ներգաղթյալներին տրվում է նաեւ ֆինանսական աջակցություն

ԱԶԳ

Մշակույթ

Հայու ճակատագրով ապրած կինովավերագրողը

Եռաբլուրում կինոտեսախցիկը ուսից կախ. 70-ն անց զբոսաշրջիկի կեցվածքով. մտազբաղ ու լուռ մի հայորդի գալիս էր բոլորի ուշադրությունը. Մոնթե Մելիոնյանի հիմնարկի մոտից նրա տեսախցիկը շարժվում է աջ ու ձախ. վերեւ ու ներքեւ. նկարում է ողջ դանդեռնը. Ֆրանսահայ կինոտեսավավերագրող Գեւորգ Այանյանն է. Նկարում եւ նշումներ է կատարում. Երեւում էր տարեց հայորդին տեսաֆիլմ է դասդասում. Ծանոթանում ենք. Արմատներով բուրսայի է. Ծնվել է 1922-ի հունվարի 14-ին Բուրսայի գավառի Գյուլլե գյուղում. Հայրը Հակոբը. տինական է եղել. մայրը Ասանեթը. տնային տնտեսուհի.

«Բուրսա. դասմում է գրագրիցս. մինչեւ 1915 թ. տաս հազարն ավելի հայեր կաղպնին: Մեծ եղեռնի ժամանակ բարիր բոլորը տարի խաչեց: Միայն մեր տոհմեն 16 հոգի զոհվեցավ. հարս երեխ եղբայրներ օսմանցին խոշտանգեց հարազատներուն աչքին առջեւ: Հայրս հրաժարվեցավ. անցավ Պոլիս: Հոն ալ հանգիստ ու դադար չունեցանք: Թալեաթի եւ Էնվերի կիսապրոդաձը կատարեցավ Քեմալ փաշան Աբաթարը: Հայրս ներքնաշորով. մի կերդ իրեն զգեց մի նոով եւ փախավ Հունաստան: Հետո գիս գրկին սեղմած մայրս գնաց հարս հետերով. գտավ զիս: Հայրենիքն հեռու ծնած եղբայրս Նուբարը եւ Մարիամ քույրիկս... Ի՜նչ. ի՜նչ գրկանք. տառապանք եւ ոդիականներ չենք տեսած... Կարճ հայու ճակատագրով ապրած մարդ եմ...»:

Իրմ որ հայի ճակատագիր: Հազարավոր գաղթականների եւ եղեռնվածների հարավանին մնացած Այանյանների ընտանիքն էլ հանգրվանեց Ֆրանսիայում: Մինչ տասներեք տարեկան դառնալը Գեւորգը հաճախեց Փարիզում ֆրանսիական դպրոց. հետո տեղափոխվեց Սեւրի Մխիթարյանների նորաբաց վարժարանը. որտեղ սովորեց մինչեւ 1939 թ. Այսօր էլ որն. Գեւորգը սիրով եւ հանակրանքով է հիշում Մխիթարյան միաբանության մասնաճյուղի վարժարանի տնօրեն Սահակ վարդապետին եւ կրկնում. «Երբ ինչ որ հայոց դասմության գիտեմ. հայր Սահակին կը դարձնի»: Հետո ընդունվեց Ֆրանսիական լիցեյ եւ սովորեց 2 տարի: 1939-ին բռնկվեց 2-դ համաշխարհայինը: Փարիզին գերադեստղները դարձան գերմանացիները: Նոր նոր էր սկսել գիրաղեսել լուսանկարչի արվեստին. երբ զորակոչվեց բանակ եւ գերմանական հրամանատարության ցուցումով մեկնեց Նորվեգիա: Գերմանական յունկերների հսկողությամբ վեց ամիս բազմաթիվ ֆրանսիացի երիտասարդների հետ Նորվեգիայում ստիպված իր զինվորական դարտքը կատարեց Գ. Այանյանն ու դում. Սեւանում-եւ այլուր: Ոգեւորված հայրենի բնաշխարհով եւ հայրասանյան հյուրընկալությամբ. 1979-ին Գեւորգ Այանյանը ծի խումբ կնատարացիների հետ նորից nsf դրեց հայրենի հողի վրա: Այս անգամ տեսավավերագրողի նրա ստեղծագործական աշխատանքի արդյունքը եղավ «Նոր Կեսարիա» տեսաժապավենը (1.5 ժամանոց): Փարիզում. Լիոնում. Մարսելում. Ռիս-Օրանջում (այստեղ է նա բնակվում) եւ ֆրանսահայ այլ գաղթօջախներում. որտեղ ցուցադրվել են բուրսացի հայորդու կինո եւ տեսաժապավենները. բնկերները. ծանոթները ու բարեկամները ոչ միայն շնորհակալ են եղել դրանց հեղինակին. այլեւ մեկ անգամ ես հայրենիքից հեռու տեսել եւ ապրել են հայոց աշխարհը:

1995-ի այս այցի ընթացքում տարեց հայորդին եղավ Գյումրիում եւ Սպիտակում. Սարդարապատում եւ Ջերմուկում. Թալինի շրջանի Աշնակ եւ Ներ-Ին Սասնաշեն գյուղերում. Ուջանում եւ Էջմիածնում. տարբեր բեմաներ. սյուժեներ որսաց նրա տեսախցիկը:

Մեր այն հարցին. թե ինչպես է բաժանվում Հայաստանից. Գեւորգ Այանյանը պատասխանեց. «Քաղցր հուշերով. նկարածս հարուս եւ բազմաբնույթ տեսաշարերով. Հայաստանին սիրահարված: Հողի եւ ջուրի կարոտ կտանիմ Հայաստանեն. կտանիմ եւ ողջույններ եւ համբույրներ. ոչ միայն դուստրերուս Էկլինին եւ Ֆլերին. այլեւ տաղանդավոր նկարիչներ. իմ լավ բարեկամներ Ռիշար Ժերանյանին. Փափազին (անոնց մասին առանձին տեսաժապավեններ. ֆիլմեր նկարած եմ). ամբողջ ֆրանսահայությանը:

ԱԱՌՈՒՆ ԳԱՐԳՈՐՅԱՆ.

ԵՐԵՎԱՆ

Փարիզյան ցուցահանդեսի 25-ամյակը՝ նոր ցուցահանդեսով

Երեկ Պատմության թանգարանում բացված ցուցահանդեսը՝ «Հայաստանի Պատմության պետական թանգարանը միջազգային ցուցահանդեսներում», նվիրված էր Փարիզում բացված «Հայկական արվեստը Ուրարտուից մինչեւ մեր օրերը» ցուցահանդեսի 25 ամյա տարեդարձին:

Լուվրի դեկորատիվ արվեստի թանգարան. 1970 թ

1970-ի հոկտեմբերի 16-ին. Փարիզում. Լուվրի դեկորատիվ արվեստի սրահներում բացվեց «Հայկական արվեստը Ուրարտուից մինչեւ մեր օրերը» ցուցահանդեսը: Դա հայերի կողմից համաշխարհային հանրությանը ներկայացված առաջին հայտն էր. որ բացվեց Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 50 ամյակի նախօրեին. Խորհրդային Միության, Ֆրանսիայի եւ Հայաստանի դրոշների ներքո. երկու պետությունների կառավարությունների հովանավորությամբ. բարձրաստիճան պաշտոնատար անձանց. խաղաղական. մշակութային գործիչների մասնակցությամբ: «Միաժամանակ ինքնություն է սա»». բնորոշեց Մարտիրոս Սարյանը: Իսկ Ֆրանսիացի արվեստագետ Գարբոն. որ երեք ամսվա ընթացքում ութ անգամ այցելեց թանգարան. այդ ցուցադրությունը համարեց առաջին լուրջ քարոզչությունը:

Ցուցահանդեսը կազմակերպել են Պատմության թանգարանի տնօրեն Ալֆրեդ Շահնազարյանը. գիտամասսայական աշխատանքների բաժնի վարիչ Արմենուհի Մարտիրոսյանը. նկարիչ ձեւավորող Արթուր Օհանյանը: Բացման խոսքով Լուվրի ցուցահանդեսի ղեկավար Արամայիս Սարգսյանը. հայ-ֆրանսիական ընկերության նախագահ Ռուբեն Սահակյանը բարձր գնահատեցին ցուցահանդեսի դերը հայ եւ ֆրանսիական մշակութային կյանքում:

Ներկայացված են օրիգինալ 50 նմուշներ (տարազներ. բագեր. գործիքներ) եւ շուրջ 300 փաստաթղթեր: Ցուցահանդեսը կգործի երեք ամիս. հովանավորել են Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Ֆրանս դ'Հարիինգը եւ դեսպանատան մշակույթի կցորդ Պատրիկ Տոնաթեյանը. որը թանգարանին նյութեր է տրամադրել:

Վերջում Ֆրանսիայի Նանսի թանգարանի տնօրեն Ժակ Սանդրոն հայտնեց. որ եկող տարի Նանսի թանգարանում կբացվի ցուցահանդես՝ նվիրված Հայաստանի հին ու նոր արվեստին:

ՆԱԲՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ.

ՆՈԲԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ

Հենիի բահն իր գրիչն է, որով պեղում է զգացմունքների աշխարհը

«Կարծում եմ. բանաստեղծությունն այսօր այն հազվագյուտ սուրբ երեւույթներից մեկն է. որ դեռ մնացել է մարդկանց մտայնության մեջ»». նույն բդբակցի հետ հարցազրույցի ժամանակ նշել է իռլանդացի բանաստեղծ Սիմուս Հենին. որն արժանացել է գրականության ասպարեզում այս տարվա Նոբելյան մրցանակին: Այսուս դափնե կիրների հետ դեկտեմբերի 10-ին Օսլոյում նա կստանա իր պարգեւը. որն այս տարի առաջին անգամ Նոբելյան մրցանակների շնորհման պատմության ընթացքում հասնում է 1 մլն դոլլարի:

Հենին կնոջ հետ Յունաստանի հարավային մասում գտնվող Պիլոս քաղաքում հանգստանում էր. երբ որդին Դուբլինից զանգահարելով հաղորդել է ուրախալի լուրը:

Յուսիսային իռլանդացի բանաստեղծն ավելացրել է. որ բանաստեղծները միշտ էլ անտեսված են եղել մարդկանց կողմից: Նա՝ չի բացառել. որ Նոբելյան մրցանակների շնորհումը կարող է հետաքրքրել խաղաղական նոպատակներ եւ այն հարցին. թե կարո՞ղ էր մրցանակ չստանալ. եթե իռլանդացի չլիներ. նա պատասխանել է. «Չեմ կարող բացել. որ այդ փաստը հավանաբար նշանակություն է ունեցել իմ ընտրության հարցում»». «Թեհրան Թայմզ» թերթում հաղորդում է ԻՈՆԱ գործակալությունը Արենից:

Ուիլյամ Յիթսից եւ Սեմուել Բեկեթից հետո. Հենին երրորդ իռլանդացին է. որ արժանանում է այդ պատվավոր մրցանակին: Նրան արդեն երկար տարիներ համարում էին «ամենասուրբ բանաստեղծը Յիթսից հետո»». նշելով. որ «նա անգլերեն լեզվին յուրահատուկ հնչողություն է հաղորդել»»:

Հենին 56 տարեկան է: Ծնվել է Քառնք Դերրիում (Յուսիսային Իռլանդիա) գյուղացու ընտանիքում: Հողի զգացումն ու բույրը միշտ էլ առկա են եղել նրա գործերում: Նրա առաջին գիրքը եղել է «Բնագետի մահը» (1966). որով ապացուցել է. որ իր «բահը գրիչն է»». եւ միայն դրանով կարող է պեղել իր նուրբ զգացմունքների հարուստ աշխարհը: Երկրորդ գիրքը՝ «Սրբություն ապաշնորհող դուռը» լույս է տեսել 1969-ին. երբ պայքարը բռնությունն ու ահաբեկչությունը կաթոլիկների եւ բողոքականների միջեւ. եւ հողը շաղախվեց արյունով: Նա Բելֆաստից տեղափոխվեց Դուբլին՝ արժանանալով շատերի ճնշադատությանը: Նրա մյուս գործերն են «Յուսիս» (1975). «Դատի աշխատանք» (1979). «Կայարան կղզին» (1984) եւ այլն:

Դասավանդել է ինչպես Օքսֆորդում. այնպես էլ ամերիկյան Բարկի եւ Հարվարդ համալսարաններում: Իր վերջին ստեղծագործությունը՝ ճնշադատական էսսեների հավաքածուն. կոչվում է «Պոետիկայի վերակենդանացումը»». որտեղ նա հույս է հայտնում. որ խաղաղական գեսնի վրա կարգուկանոն կհաստատվի. որ մարդիկ կհասկանան միմյանց. կհարգեն կարծիքների տարբերությունը. ինչ ազգության էլ պատկանեն:

Հենին ամուսնացած է. ունի մի դուստր եւ երկու որդի:

ԸՍՏ «ԼՅՈՒՇՈՒԹԻ».

Սերգեյ Եսենինը 100 տարեկան է

ԵՐԵՎԱՆ. 31 ՀՈԿՏԵՄԲԵՐ. ՍՆՄՔ: Ականավոր ռուս բանաստեղծ Սերգեյ Եսենինի ծննդյան 100 ամյա տարեդարձի առիթով Հայաստանի Գրողների միության մեծ դահլիճում հոկտեմբերի 31-ին հավաքվեցին գրականագետներ. գրողներ. լրագրողներ. մեծ բանաստեղծի երկրպագուներ: Եսենինի կյանքի ու ստեղծագործության արժեւորմամբ հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր. պրոֆեսոր Լեւոն Մկրտչյանը: Գրական կոմպոզիցիայով հանդես եկավ Աննա Սիրեյանը:

Մանկական երգի փառատոն Երեւանում

Ավարտվեց «Անուրջներ» մանկական երգի փառատոնի առաջին փուլը: Եռօրյա փառատոնի հաղթողներ ճանաչվեցին Լիա Կուրոյանը. Շուշանիկ Բրուտյանը եւ Լիա Բուրոյանը: Երկրորդ փուլը կլինի 1996-ի ապրիլին:

ԱՅՍՕՐ

«Փարաջանովը» ցուցադրվում է միայն պատվերով

Երեւանի «Խամաճիկներ» պետական բարոնի ռեժիսոր Մնացական Փիլոյանը հայտնեց. որ «Փարաջանով» ներկայացումը ցուցադրվում է միայն պատվերով՝ հատուկ ֆիրմաների. կազմակերպությունների եւ արտասահմանյան զբոսաշրջիկների համար:

ԱՅՍՕՐ

ԳՈՐԻՍ

Տիկնիկների շքերթում՝ նաեւ Սուսաննայի տիկնիկները

Գորիսի դրամատիկ բարոնին կից 1990-ից գործող տիկնիկային բարոնը իրավամբ կարելի է կոչել Սուսաննայի բարոն: Աշխատանքը սկսում է մանկապարտեզի երեխաների հետ: Նաեւ դուն. իր գործին սիրահար երիտասարդ կիներ բեմադրություններ իրականացնում է 6-10-դ դասարանների 8 աշակերտների հետ. ինքն է պատրաստում տիկնիկները. ներկայացումներ: Հյուրախաղերի ճանապարհներ Սիսիան. Կապան. Ջերմուկ. բարոնին շանսյալ են բերում: Նոպում է նոպքներ ունենալ Երեւանում: Սուսաննայի կարծիքով. գավառական բարոնում ստեղծված տիկնիկներն առավել ազգային ու ավելի գրավիչ կարող են լինել: Նոպում է մնձահասակների համար իսամաճիկների բարոն ստեղծել. բեմադրել «Դոն Կիխոտն» ու «Մասգլին»:

Սուսաննա Ադամյանը մասնագիտությամբ նկարիչ-հանդակագործ է. սովորել է Սանկտ-Պետերբուրգի Ռեպինի գեղարվեստի ակադեմիայում:

ՀՀ տիկնիկային բարոնների միությունը սեպտեմբերի 21-ին Գորիսի տիկնիկային բարոնին նուիրեցնում հրավիրեց մասնակցելու ՅՈՒՆԵՍԿՕ-ի 50 ամյակին նվիրված տիկնիկային արվեստի երեւանյան շքերթ-փառատոնին: Շքերթում Սուսաննայի տիկնիկներն էլ քայլեցին. Ներկայացության հրաշալիքում «Մկների ժողովից» ու «Ոսկե ճուտիկից» հատվածներ ներկայացրին: Թատրոնը նեղությունում հյուր եղավ նաեւ Երեւանի Հարավ-արեւմտյան բաղամասի դպրոցներից մեկում:

ՍԵՐԳԵՅ ՀԱՅՈՒՐՅԱՆ.

digitised by A.R.A.R.@

Մարզական

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

Այն ժամանակ, 40 տարի առաջ...

ՄԻՍԱԿ ԱԼԵՔՍԵՅԵՆ

Այս օրերին հայկական ֆուտբոլում նշվում են կարեւոր իրադարձությունների հետ առնչվող յուբիլեյաններ: 20 տարի առաջ Երեւանի «Արարատը» երկրորդ անգամ նվաճեց ԽՍՀՄ գավաթը, եզրափակիչում 2-1 հաշվով պարտության մատնելով Վորոշիլովգրադի «Զարյային»: 10 տարի դրանից առաջ Հայաստանի գլխավոր թիմի ֆուտբոլիստներն 1-ին անգամ լավագույնը ճնշվեցին Խորհրդային Միությունում, 1-ին խմբում նվաճելով չեմպիոնի փոքր ոսկե մեդալները: Վերջապես 40 տարի առաջ մեր ֆուտբոլային կյանքում տեղի է ունեցել մի իրադարձություն, որի մասին խոսակցություններ են գնում մինչեւ հիմա: Խոսքը Երեւանի «Սպարտակի» եւ Սվերդլովսկի Զինվորական օկրուգի սպայական թիմի հանդիպման մասին է, որը կայացավ «Հանրապետական» լեփ-լեցուն մարզադաշտում: Ի դեմ, մարզադաշտի օբյեկտում տեղեր էին գրավել նաեւ աշխարհի տարբեր անկյուններից ժամանած հոգեւորականներ: Նրանք Երեւան էին եկել մասնակցելու Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրված Վազգեն Առաջինի հանդիսավոր օծմանը:

1955-ին այս թիմերը հանդես էին գալիս «Բ» խմբում: Ու բեւեռնախորդ տարի այդքան մեծ աղմուկ հանած «Սպարտակի» կազմից (1954-ին հայ ֆուտբոլիստներն անանախադեպ հաջողության էին հասել, դուրս գալով գավաթի խաղարկության եզրափակիչ) բացակայում էին տարբեր թիմեր տեղափոխված Հարություն Բեհեյանը (Մոսկվայի «Սպարտակ»), Ռաֆայել Մաթեւոսյանը (Մոսկվայի «Տորպեդո»), Վիկտոր Սերկուլովը (Օդեսայի «Պիշեւիկ»), Երեւանցիները հիանալի խաղ էին ցուցադրում, համարվեցին վրա աշխատանքից առաջադիմ Բարաջյանը ճեռքով հրել էր մրցակցին: Մարզադաշտն ասես ազդանշանով ժայթքեց: Սակայն Շեւցովն անտեր էր: Խաղը նա մի կերպ ավարտեց, սակայն հնարավոր չեղավ զսպել համբերությունից դուրս եկած, ուղղակի գազազած հանդիսական ներին, որոնք նետվեցին դաշտ: Մրցավարին հազիվ փրկեցին, հասցնելով հանդերձարան: Անկարգությունները դուրս եկան մարզադաշտի սահմաններից, եւ մինչեւ ուշ երեկո երեւանի փողոցներում անհանգիստ իրավիճակ էր:

Հանդիպումը մեծ աղմուկ բարձրացրեց: Մոսկվայից անմիջապես ժամանեց ՍՍԿԿ կենտկոմի հատուկ հանձնաժողովը, որի «եզրակացության» հիման վրա աշխատանքից ազատվեցին Երեւանի ֆաղաքագլուխ Գ. Փահլեւանյանը, միլիցիայի վարչության պետ Ա. Սիմոնյանը, հանրապետական սպորտկոմիտեի նախագահ Գ. Սիմոնյանը եւ ուրիշներ: Ֆուտբոլիստներից առավել շատ տուժեց «Սպարտակի» ավագը՝ Հովսեփ Ասատրյանը: Նա ստիպված էր հրաժեշտ տալ թիմին: Այս բոլոր խստությունները բացատրվում էին այն բանով, որ կենտկոմականները ֆաղաքական երանգ էին տվել տեղի ունեցածին («զանգվածային հարձակում ռուսների վրա»): BBC-ն էլ իր կողմից հաղորդեց, որ Երեւանում 40 հազար հայ են ըմբոստացել ռուսական ինքնակալության դեմ:

Եւ ահա ԱՄՆ տեղափոխված Հ. Ասատրյանի մոտ եմ: Խնդրեցի պատմել «սվերդլովսկյան միջադեպի» մասին.

- Եթե խոսենք ֆաղաքական երանգների մասին, ապա ամեն ինչ սկիզբ էր առնում Մոսկվայից: Նախապես որոշվել էր, որ այդ խաղը վարելու է ռուսաստանցի Սամոլազովը՝ նա էլ մեկ օր առաջ ժամանել էր Երեւան: Բայց խաղի օրը պարզվեց, որ Մոսկվան նոր որոշում է կայացրել, մրցավարությունը վստահելով Ն. Շեւցովին: Սա բոլորին զգաստացրեց: Ակամա մտածեցիք՝ հատուկ ցուցումով է գալիս: Դժբախտաբար, կասկածները զուրկ չէին հիմից: Անկեղծորեն պետք է ասեմ, որ նա իրոք սուլել էր, նախքան Բարաջյանը կկատարեր գոլային հարվածը: Ուրիշ բան է, թե ինչու սուլեց, չէ՞ որ հարությունն ամեն ինչ կատարեց կանոնների սահմաններում:

Ինձ մեղադրեցին այն բանում, որ իբր խաղից հետո, որպես թիմի ավագ, ծեռք չեմ մեկնել մրցավարին: Իրականում տեղի ունեցավ հակառակը: Շեմ կարող մոռանալ եւ սպորտկոմիտեի նախագահ Գրիգոր Սիմոնյանին, որը հանդերձարանում դիմեց ինձ, խնդրելով դուրս գալ եւ հանգստացնել հանդիսականներին, որ չէին հեռանում մարզադաշտից: Հետագայում նրանցից շատերին ծերբակալեցին ու դատեցին...

Մրցավար Շեւցովին հազիվ փրկեցին նրան հագցրին ոստկանի համազգեստ եւ կեսգիշերին անկնկաս հասցրին Հոկտեմբերյան, որպեսզի այնտեղից գնացքով մեկնի Մոսկվա: Խաղի արդյունքը ֆեդերացիան չեղյալ հայտարարեց: Նշանակվեց նոր հանդիպում, այս անգամ Օդեսայում:

Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի տրամադրությամբ էին խաղը վարելու նոր մրցավարները: Հենց սկզբից «Սպարտակի» դարպասին նշանակվեց 11 մետրանոց, այնուհետեւ սվերդլովսկցիները խփեցին եւս մեկ գոլ եւ իրենց համար արտահայտեցին տեղը «Ա» խմբում:

40 տարի առաջ հայկական ֆուտբոլին ծանր եւ զգայուն հարված հասցվեց: Այդուհանդերձ, նրա առաջընթացը կանգնեցնել ոչ ոք չկարողացավ: 1956-ին ԽՍՀՄ ժողովուրդների առաջին սպարտակիադայում հայ ֆուտբոլիստները տեղ գրավեցին 1-ին հնգյակում: Հաջորդ տարի սահմանվեց յուրաքանչյուր ոեկորդ՝ առաջնության գրեթե մի ամբողջ շրջան (16-17 խաղ) դարպասապահ Սերգեյ Զատիկյանը մնաց անխոցելի: Ապա մեր գլխավոր թիմը մարզիչներ Բորիս Սմիսլովի եւ Հովսեփ Ասատրյանի գլխավորությամբ այնպիսի խաղ ցույց տվեց, որ ոչ մի մրցավարական շահագրգռվածություն չէր կարող կանգնեցնել նրա վերադարձն ուժեղ գույների խումբ: Դա տեղի ունեցավ 1959-ին: ■



Աճկրկնելի դարպասապահ Սերգեյ Զատիկյանը

ՈՒԵՖԱ

Եվրոպական երկրների ազգային առաջնություններում

Հոլանդիա

Այս երկրի առաջնությունում տեղի է ունեցել 9-տուր: Ինչքան էլ որ Հոլանդիան աշխարհում ճանաչված է որպես ֆուտբոլային երկիր, այստեղ էլ թիմերի մեծ շերտավորում կա: Ամեն տարի երկրի առաջնություններում տոն են տալիս տիտղոսակիր երկու-երեք թիմեր «Այաքսը», «Էյնդհովենը», «Ֆեյենորդը»: Այս անգամ էլ «Այաքսը» եւ «Էյնդհովենը» առաջին երկու տեղերում են: Ընդ որում, «Այաքսը» ոչ մի միավոր չի կորցրել: «Ֆեյենորդը» հաջող չի սկսել առաջնությունը, եւ չնայած միավորների զգալի տարբերությամբ զիջում է իր մշտական մրցակիցներին «Այաքսին» ու «Էյնդհովենին», սակայն ընթանում է 4-րդ տեղում:

9-րդ տուր

«Էյնդհովեն»-«Վալվիկ»	4-0
«Վիլեմ»-«Ֆեյենորդ»	2-2
«Իգլզ»-«Բրեդա»	1-1
«Գրոնինգ»-«Ռոդա»	0-1
«Հերենվեն»-«Սպարտա»	4-0
«Վիտես»-NEC	2-2
«Վուրեխտ»-«Դե Գրաֆշաֆ»	1-1
«Տվենտե»-«Այաքս»	0-3
«Ուտրեխտ»-«Ֆորտունա»	2-3

Մրցաշարային աղյուսակը 9 տուրից հետո

	Խ	Ս
1. Այաքս	9	27
2. Էյնդհովեն	9	22
3. Վիլեմ	9	19
4. Ֆեյենորդ	9	15
5. Հերենվեն	9	15
6. Գրոնինգ	9	14
7. Վալվիկ	9	13
8. Ռոդա	9	11
9. Սպարտա	9	11
10. Ֆորտունա	9	11
11. Բրեդա	9	10
12. Տվենտե	9	9
13. Վիտես	9	9
14. Ուտրեխտ	9	8
15. NEC	9	8
16. Դե Գրաֆշաֆ	9	6
17. Իգլզ	9	6
18. Վուրեխտ	9	6

Պորտուգալիա

Այս երկրի առաջնությունում էլ նույն հանրահայտ թիմերն են գլխավորում մրցաշարային աղյուսակը «Պորտոն», «Սպորտինգը», «Բենֆիկան»: Ճիշտ է, միավորների տարբերությունը նրանց միջեւ 7-տուրից հետո դեռ մեծ չէ:

7-րդ տուր

«Լեյրիա»-«Սպորտինգ» Պ.	1-2
«Մարիտիմու»-«Բելենենսես»	1-2
«Բենֆիկա»-«Վիտենտե»	3-0
«Սալգեյրոս»-«Ամադորա»	0-0
«Ֆարենսե»-«Շավես»	0-0
«Տիրսենսե»-«Գիմարաես»	2-2
«Կամոնսայորենսե»-«Լեսա»	1-1
«Սպորտինգ» Բ-«Պորտո»	0-3
«Ֆելգեյրաս»-«Բուավիստա»	2-0

Մրցաշարային աղյուսակը 7-տուրից հետո

	Խ	Ս
1. Պորտո	7	19
2. Սպորտինգ Պորտուգալ	7	16
3. Բենֆիկա	7	14
4. Բուավիստա	7	13
5. Բելենենսես	7	13
6. Սպորտինգ Բրագա	7	13
7. Գիմարաես	7	11
8. Մարիտիմու	7	10
9. Սալգեյրոս	7	10
10. Ֆելգեյրաս	7	10
11. Ֆարենսե	7	8
12. Դեսպ. Շավես	7	6
13. Ամադորա	7	6
14. Տիրսենսե	7	6
15. Լեսա	7	5
16. Վիտենտե	7	4
17. Լեյրիա	7	4
18. Կամոնսայորենսե	7	4

ՇԱԽՄԱՏ

ՀՀ ներկայացուցիչները ՖԻՖԱ-ի գլխավոր հանձնաժողովներում

Հայաստանի շախմատի ֆեդերացիայում ֆաքս ստացվեց ՖԻՖԱ-ի մշտական քարտուղար Կասսո Աբուեղոյից, որում նշվում է, որ շախմատի միջազգային ֆեդերացիան ստեղծել է նոր ղեկավարող մարմիններ գլխավոր հանձնաժողովներ: ՖԻՖԱ-ի նախագահ Յոռենսիո Կամարմանեսի նախաձեռնությամբ այդ հանձնաժողովներում ընտրվել են նաեւ Հայաստանի ներկայացուցիչներ: Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահ, շախմատի համաշխարհային 32-րդ օլիմպիադայի կազմկոմիտեի նախագահ Վանիկ Զամարյանը դարձել է շախմատի զարգացման գլխավոր հանձնաժողովի անդամ, որի պետ է դեկավարի կրթության, կանոնագրքի, միջազգային կազմակերպությունների հետ կապի, զարգացող երկրների եւ շախմատի խորհրդի հանձնաժողովների աշխատանքները:

ՖԻՖԱ-ի Եվրոպական 5-րդ գոտու նախագահ, շախմատի համաշխարհային 32-րդ օլիմպիադայի գլխավոր քարտուղար Գագիկ Հովհաննիսյանն ընտրվել է գլխավոր հատուկ հանձնաժողովում, որը պետք է հսկի շախմատային հրատարակության, շախմատային արվեստի, համակարգչային շախմատի, շախմատային կոմերցիայի եւ ՖԻՖԱ-ի ծրագրերին ուղեկցող հանձնաժողովների աշխատանքները: *ՍՍԱՐԳ*

ԲՈՆՅՔՍՄԱՐՏ

Միխայել Փափազյանը Երեւանում

Այս օրերին Հռոդանի կիրճում կարելի է հանդիպել նախկին երեւանցի, Հայաստանի վաստակավոր մարզիչ, փարիզաբնակ Միխայել Փափազյանին: ԽՍՀՄ բոնցֆամարտի առաջնությունների բազմակի մրցանակակիր մեկշաբաթյա այցով հայրենիք է եկել մարզելու Թրանսիայի հավաքականի անդամ, այդ երկրի չեմպիոն, սեւամորթ գերծանրքաշային Ժոզիֆ Բլոկուսին:

- Թրանսիայում, լավ գիտեն բոնցֆամարտի հայկական դպրոցի հիանալի ավանդույթների մասին, զրույցի ժամանակ ասաց Փափազյանը: Պատահական չէր, որ Թրանսիայի հավաքականի իմ գործընկերներն ինձ խնդրեցին 22-ամյա Ժոզիֆին ուղեկցել Հայաստան տեղի առաջատար վարպետների հետ համատեղ պարապելու համար: Երեւանում նախկին բոլոր գործընկերներս ու սաներս հոգատարությամբ են շրջապատել ինձ: Սիավասիկ Ատոմ Պողոսյանը: Նա, որ արդեն ութ տարի բռնել է ակտիվ մարզումները եւ ներկայումս աշխատում է ՀՀ ՆԳՆ համակարգում, ինձ օգնելու նպատակով երեսն ձեռնոցներ է հագցնում, դառնում Ժոզիֆի մարզընկերը եւ նրան «Ֆորակոլով» լավ դասեր է տալիս: Ասեմ նաեւ, որ Թրանսիայի երիտասարդական հավաքականի ավագ մարզիչ Այդր Կոստանտինոն (նրան ժամանակին հարել է նախկին սաներից մեկը՝ Դավիթ Պետրոսյանը) խնդրել է, որ այստեղ համաձայնեմ գալիք հունիսին համաշխարհային մասնակցությամբ կազմակերպվող Կուբայում կայանալիք աշխարհի և հիսատարդական առաջնությանը (սեպտեմբերին) լավագույնս նախապատրաստվելու համար...

ՅՈՒՐԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՖՈՒՏԲՈԼ

Մարադոնան ամենուր

ԳԻՐԳՈՐ ԱՍԼԻԲԵԿՅԱՆ

Վալենս, Ֆրանսիա

Մեկ օր չի անցնում առանց այն բանի, որ սինյոր Դիեգո Մարադոնան իր վրա չգրավի մամուլի կամ հեռուստատեսության ուշադրությունը: Նա իր մազերը ներկել է իր նոր թիմի՝ Բուենոս Այրեսի «Բոկա Խունիորսի» ավանդական կապույտ-դեղին գույներով: Աշխարհի լավագույն ֆուտբոլիստը, որը անցյալ տարի ԱՄՆ-ում տեղի ունեցած աշխարհի առաջնության ժամանակ արգելված դեղամիջոցներ օգտագործելու համար որակազրկվել էր, կրկին մարզադաշտ է վերադարձել: Նա իր առաջին միջազգային ելույթը պետք է ունենա Սեուլում (Հարավային Կորեա), որին ներկա կգտնվի Արգենտինայի նախագահ եւ Մարադոնայի ջերմ երկրպագու Կարլոս Մենեմը: Մինչ այդ, Դիեգո Մարադոնան, ինչպես հայտնի է, Փարիզ էր ժամանել, ստեղծելու պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների միջազգային պատանեական միություն, որին մաս են կազմել համաշխարհային ֆուտբոլի այնպիսի աստղեր, ինչպիսիք են Ռոմարիոն, Ստոյիչկովը, Էրիկ Կանտոնան, Վիալին, Վեան եւ ուրիշներ: Մարադոնայի միությունը ուզում է դառնալ ՖԻՖԱ-ին հակակշիռ կազմակերպություն: Ինչպես հայտնի է, Մարադոնան եւ ՖԻՖԱ-ի նախագահ Ժոաո Ավելանժը իրար հայտարարված բշնամիներ են: Մարադոնան ուզում է իր նոր միության շնորհիվ պատժել պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների շահերը ՖԻՖԱ-ի բյուրոկրատական որոշումներից, օրինակ, չկրկնել այն սխալը, որ ԱՄՆ աշխարհի առաջնության ժամանակ խաղերի մեծամասնությունը սկսվում էր կեսօրվա ժամը 12-ին: Մարադոնան ուզում է, որ ֆուտբոլիստների ծայնն ավելի բարձր եւ հաստատ լսեն ՖԻՖԱ-ի գրասենյակներում: Ճշմարտություն է, որ բյուրոկրատական աշխարհը հեռու է մարզադաշտի խնդիրներից, ինչպես պրեզիդենտով իրարից հեռու են Մարադոնան եւ Ավելանժը: Ավելանժը գտնում է, որ Մարադոնայի կողմից ստեղծված նոր միությունն անօրեն է, քանի որ ՖԻՖԱ-ն այդ առթիվ որեւէ պատասխանական գրություն չի ստացել: Իսկ եթե ստանա, որեւէ բան կփոխվի՞: ■

Մարադոնան Փարիզում

Մրցավարը՝ կեղծարար

Արգենտինացի հայտնի մրցավար Խավիեր Կաստրիլիոն մեղադրվել է Ուրուգվայի մի բերի կողմից այն բանի համար, որ իբր Հարավային Ամերիկայի սուպերգավաթի «Նասիոնալ» (Ուրուգվայ)-«Ֆլամենգո» (Բրազիլիա) խաղի ժամանակ թույլ տված սխալն ուղղելու համար հանդիպումից հետո կեղծ գրառում է կատարել արձանագրությունում: Բրազիլացիներն այդ խաղը շահել են 1-0 հաշվով: Ըստ ուրուգվայցի լրագրողի, արգենտինացի մրցավարը խաղի ընթացքում երկու անգամ դեղին քարտ է ցույց տվել «Ֆլամենգոյի» դարպասապահ Պաուլո Սեզարին, բայց չի հեռացրել խաղադաշտից, ինչպես պահանջվում է օրենքով: Խաղից հետո Կաստրիլիոն հիշել է իր սխալը եւ արձանագրության գրառումների մասնակցում նշել է, որ Սեզարը մեկ զգուշացում է ստացել: Կաստրիլիոն արդարացել է, թե ինքը հեռացրել է ուրուգվայցի խաղացողին, որի պատճառով Ուրուգվայի մամուլը որոշել է վրեժխնդիր լինել, հարձակվելով իր վրա:

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Օրվա հետքերով

ԲՈՍՆԻԱ

Վենդետա մոջահեդների եւ բրիտանացի խաղաղարարների միջեւ

Բոսնիայի Զենիցա քաղաքի շրջակայքում տեղաբաշխված բրիտանական խաղաղարարներ «կրակն են բնկել»: Բանն այն է, որ ռազմանավի նայն հասկածում են գտնվում նաեւ այսպես կոչված մոջահեդներ բոսնիացիների կողմից կոչող եւ իրենց անկարգապահությամբ հայտնի մահմեդական երկրներից եկած կամավորներ, որոնց դաստաղում սերնդիաս տված միջադեպեր են տեղի ունենում, ինչ էլ էս խանգարում խաղաղարար գործողություններին ու հումանիտար բեռների տեղափոխմանը: Իրավիճակը սասթիկ բիրտացավ, երբ 3 շաբաթ առաջ բրիտանացի մի զինվոր, պատանելով իրեն, ստիպված է եղել գնդակահարել մի մոջահեդի, որը ատրճանակով դաղանացել է խաղաղարարին: Դրանից հետո մոջահեդներ ոչ է մնացել գնդակահարեն մի խումբ նորվեգացիների, որոնց բրիտանացիների տեղ են դրել: Բրիտանացիների վկայությամբ մոջահեդների եւ բրիտանացիների միջեւ իսկական վենդետա է սկսել եւ դրա վերջը չի երեւում: Հերթական բախումը տեղի է ունեցել շաբաթ օրը, երբ 5 բրիտանացիներ հրաշքով են մահից փրկվել: Այդ խաղաղարարները բոսնիական կառավարական բանակի տղայի ներկայությամբ կրակի դադարեցման գծում հեռեղ են հրա-

դարարի կատարմանը: Երբ 30 մոջահեդներ հանկարծակի շրջապատել են նրանց: Մոջահեդներից 15-ը ճնշաճաությունն տակ են վերցրել բրիտանացիներին, իսկ մյուսներ սկսել են անդամալուծ խաղաղարարներին եւ սպառնացել են հաշվեհարդար տեսնել նրանց հետ: Բարեբախտաբար բոսնիական բանակի տղան կարողացել է համոզել մոջահեդներին, որ չսպանեն բրիտանացիներին: Ընդ որում վիճակն այնքան լարված է եղել, որ մոջահեդները միչ է մնացել բրիտանացիների հետ բոսնիական տղային էլ գնդակահարեն: Բրիտանացիների վկայությամբ Զենիցայի մոտակայքում է գտնվում 500-ից 800 մոջահեդների հենակետը: Այդ մոջահեդներից միայն 30-40 տոկոսն են եկել ուրիշ երկրներից, մնացածը տեղացիներ են, որոնք այս կամ այն դաստաղով միացել են նրանց, մորոք են բռնել եւ դաղանաբնյան ոճով վանդակավոր բիկնոցներ են կրում: Կամավորներ Մերձավոր Արեւելքի եւ Հյուսիսային Աֆրիկայի տարբեր մահմեդական երկրներից, ինչպես նաեւ Աֆղանստանից են եկել: Դրանց մի մասը կռվել է Աֆղանստանում, մյուսներ կարված են ալժիրական եւ էիիպական ծայրահեղականների հետ: Բրիտանացիների վկայությամբ մոջահեդների եւ Բոսնիա օգնություն բերող մահմեդական բարեգործական կազմակերպությունների միջեւ կապ գոյություն ունի: Ինչպես եւ աֆղանական դաստաղամի ժամանակ այդ կազմակերպություններ հումանիտար օգնության անվան տակ զրահաբիններին հանախ ռազմական օգնություն են ցուցաբերել:

ԳԱԲԻԳՈՐ ԷՄԻԼ-ՏԵՐՅԱՆ

Անգլիայի քաղաքում էլ են հեռախոսով «գժվացնում»

Բլեքբեռնի հանրակրթի առիթով մի ծիծաղաբեռ դեպք է տեղի ունեցել: Կանադական ռադիոկայանի հաղորդավար Պիեռ Բրոսարդ, որը հանրությանը հայտնի է իր կատակներով, կարողացել է կապվել հեռախոսով անգլիական քաղաքում հետ եւ, ներկայանալով որպես Կանադայի վարչապետ, 15 րոպե զրուցել է նրա հետ: Անգլերեն լեզուն այնքան էլ լավ չիմացող Բրոսարդ խոսակցությունը սկսել է անգլերենով, հետո, ասելով, թե շատ է հոգնած, անցել է ֆրանսերենի: Կանադայի վարչապետ Ժան Կրետիենի ձայնով Բրոսարդ դասմել է քաղաքում, թե ինչ ճգնաժամի մեջ է գտնվում իր երկիրը եւ խնդրել է, որ քաղաքին հեռասատեսությամբ հանդես գա հոգնոց Կանադայի միասնության: Նորին մեծությունը անմիջապես խոսացել է օգնել: «Վարչապետ» ասել է, թե «իր բիմը» նախատրաստում է քաղաքում զենքացման տեմպ: Էլիզաբեթ Երկրորդը խնդրել է, որ ելույթը որքան հնարավոր է կարճ լինի: Բրոսարդ Կրետիենի ձայնով խոսացել է, որ ելույթի տեմպը սմմիդրի փաթիլների տափի վրա գրված քաղաքագետների զուգակից եկար չի լինի: Հետո, վերադառնալով Քվեբեկին, «վարչապետն» ասել է, թե չի ցանկանում, որ «Քվեբեկը հեռանա, այլապես բարդություններ կառաջանան դրամների հետ: Քաղաքին չի հասկացել, թե ինչ բարդությունների մասին է խոսք, եւ Բրոսարդը բացատրել է, որ այդ դեպքում իրենք ստիպված կլինեն 2 դոլլարանոցների վրայից բաքաքին դիմանկարը հանել: Տարբ բոլոր խոսելուց հետո Նորին մեծությունը մի քանի անգամ մեղմորեն փորձել է գայլը կարճել: Վերջում, մի անգամ էլ խոսանալով անել այն ամենը, ինչ հնարավոր է, բաքաքին խնդրել է ուղարկել իր աղագա ելույթի թեմաը: Բրոսարդ եւ նրա բիմը Բաքինհեմյան պալատ են ուղարկել նեղությունը խնդրող սարք: Պատասխան չի ստացվել: Դրա փոխարեն Բաքինհեմյան պալատից թեմ է գնացել Կանադայի վարչապետի աղմինիստրացիային: Աղմինիստրացիան ոչ մի մեկնաբանություն չի արել: Թե ինչպես է հաջողվել Բրոսարդին հեռախոսով կապվել բաքաքին հետ, նա չի հայտնում, ասելով, թե դա գաղտնիք է: Միայն հայտնում է, թե զանգի նախադրատման համար 3 օր է պահանջվել: Այժմ մոնրեալցի 29 ամյա կատակասեր ասում է, թե դատաստվում է զանգել Միացյալ Նահանգների նախագահ Քլինթոնին: Սակայն դրա համար նա պետք է լավացնի իր անգլերենի իմացությունը: Մինչեւ այժմ Բրոսարդին հաջողվել է հեռախոսով «գժվացնել» ֆրանսիական կինոդերասանուհի Բրիջիթ Բարդոյին, Հաիթիի նախագահ Արիստիդին եւ Հռոմի պապին: Բաքինհեմյան պալատի ներկայացուցիչները հայտնել են, որ փոխելու են բաքաքին հետ հեռախոսակապի այժմ գոյություն ունեցող արտոնությունը: Բրոսարդի եւ անգլիական բաքաքին հեռախոսագրույցի մի մասը հեռարձակվել է կանադական ռադիոյով: Բաքինհեմյան պալատից չեն հայտնել, հասկացե՞լ է արդյոք բաքաքին, որ իրեն «գժվացնում» են, թե ոչ:

Գ. Է.-Տ.

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

սեփական տուն 3 սենյականոց, 400 մ² հողամասով, պտղատու ծառերով, 2 տեղանոց ավտոտնակով, սեփական կաբասյանցով, արհեստանոցով:

Հասցեն. Այգեստան 10-րդ փողոց, տուն 29 (Շերժինսկու դպրոցի մոտ):

Հեռախոս. 56-49-45, 25-65-08 Գեորգի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 5-ին, ժամը 10:00-ին տեղի կունենա դպրոցականների միջազգային Սարոյան օլիմպիադան մաթեմատիկա առարկայից: Ցանկացողները կարող են մասնակցել:

Հասցեն Երեւան 49, Ալեք Մանուկյան 1, Երեւանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետ, հեռ. 59-79-28:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սլավիչ ամ կողմից կազմակերպված առեւտրի տունը հայտարարում է լուսանկարչական թղթերի եւ նյութերի վաճառք: Ցանկացողները դիմեն Երեւանի ֆոտոկոմբինատ:

Հասցեն՝ Երեւան, Պարոնյան 8, հեռ. 538577, 538578:

ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Մաշտոցի պողոտայի վրա գտնվող («Նաիրի» կինոթատրոնի մոտ) 4 հարկանի բարձ շենքի 1-ին հարկում գտնվող 71 քմ ընդհանուր մակերեսով, 43,4 քմ բնակելի մակերեսով բնակարան:

Հնարավոր է բացել խանութ կամ օֆիս:

Գիներ պայմանագրային:

Հասցեն՝ Մաշտոցի 39/12 շենք, բն. 49

Հեռ. 56-12-43

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 2-ին, ժամը 14³⁰-ին Գողտնի մեքենան մեծ դասակցում տեղի կունենա հանդիսությամբ բանաստեղծ հասարակական

ՆԵԼԼԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ

հետ:

Հայաստանի գրողների միություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատանն անհրաժեշտ է եկող եւ ավելի սենյականոց 8-12 բնակարան ունեցող շենք վարձակալման կամ գնման համար:

Զանգահարել 28-04-57, 52-98-30

ԱՇԽԱՐՀ

ՄԱԿ-ը կարիքավորների թվում

Կարծես ոգեւորվածանալով «Ինչ մի ջոցներով ավելի շատ գործ ունենալ» նախագահ Քլինթոնի կոչերին, ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Բուտրոս Ղալին Ռոտարի միջազգային ակումբի ներկայացուցիչների առաջ ելույթ ունենալով հայտարարել է, որ ներկայումս ՄԱԿ-ն այնքան շատ է կարիք զգում կանխիկ փողի, որ ստիպված կլինի լուծարվելու մասին մտածել. Ֆրանսիական գործակալությունը հաղորդում է «Թեհրան Թայմզ» թերթում:

«ՄԱԿ-ից դատանցում են գործել, բայց ֆինանսական միջոցներ չեն հայթայթում», ասել է նա հիշեցնելով, որ 70 անդամ-երկրների ընդհանուր դարտեն այդ միջազգային կազմակերպությանը կազմում է 3-7 միլիարդ դոլար: «Բավականաչափ կանխիկ դրամ չունենք մեր տրամադրության տակ, որպեսզի ի կատար ածենք մեր դարտականությունները: Կառավարությունները յուրաքանչյուր անձի դիմաց մոտ 150 դոլար են ծախսել 1992-ին համեմատած 2 դոլարից էլ դակաս նեղությունների հետ, որոնք նրանք կատարել են հոգոց ՄԱԿ-ի: Բայց նրանք այդ ինչն էլ այժմ չեն ցանկանում վճարել, եւ երբ վճարման միջոցներ չձեռնարկվեն, ստիպված կլինենք լուծարել Միավորված ազգերի կազմակերպությունը, ինչպես ժամանակին լուծարվեց Ազգերի լիգան» ավելացրել է նա կոչ անելով նեցուկ կանգնել իր կազմակերպությանը: «Միջազգային այս կազմակերպությունը ձեր բոլորի կազմակերպությունն է», եզրափակել է նա իր խոսքը: ■

Քրդական խորհրդարան Մոսկվայում

Հոկտեմբերի 25-ին Թուրքիան հանդի սավորությամբ տոնեց հանրապետական կարգերի հռչակման 72 ամյակը: «Այն ժամանակ, երբ Բորիս Ելցինը, գրում է «Հյուրրիյեթը» հոկտեմբերի 31-ի համարում, տոնի առթիվ շնորհավորագիր էր ուղարկում Սուլեյման Դեմիրելին, Պետդումայի շենքում գումարվեց այսպես կոչված քրդական խորհրդարանի նիստ»: Սա, ըստ թերթի, լուրջ մահոգություն է դատճառել Անկարային, արտգործնախարարությունն ու Մոսկվայում թուրքական ներկայացուցիչները անմիջապես դիմել են ռուսական դատանական շրջանակներին, դահանջելով բացատրություն: Ըստ «Միլլիյեթի», այդ առթիվ դատանական բողոք է ներկայացվել: Քրդական խորհրդարանի փոխադրումը Մոսկվա կարելի է համարել Բալկանների, Անդրկովկասում եւ Միջին Ասիայում Թուրքիայի հաղթական անհանգիստ ակտիվության յուրատեսակ արձագանք: Հենց այդ ակտիվությունն է, որ, ըստ երեւույթին, ստիպում է Ռուսաստանին որոշ ազդեցության լծակ Անկարայի դեմ օգտագործել քրդական գործոնը:

Հ. Ց.

ՀԱՄԱՌՈՏ

Մուբարաքը դեմ է Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք ճանաչելուն

Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը դահանջել է ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնից, որպեսզի վերջինս չեղյալ համարի Սենատի կողմից ընդունված որոշումը, որը հավանություն էր տվել ամերիկյան դեսպանությունը Թել Ավիվից Երուսաղեմ տեղափոխելու առաջարկին, վերջինս դիտելով որպես այդ երկրի մայրաքաղաք: Եգիպտական կողմը չի բացառում, որ այդ որոշումը կարող է դատճառ դառնալ Եգիպտոսի եւ ԱՄՆ-ի հարաբերությունների բարդացմանը:

Նոր 5 հազարանոց Ռուսաստանում

ՄՈՍԿՎԱ, 31 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Հոկտեմբերի 31-ից Ռուսաստանում շրջանառության մեջ են դրվել 5000 ռուբլի արժողությամբ նոր թղթադրամներ: ՌԴ Կենտրոնական բանկի հավաստիացմամբ՝ այն ունի նույնքիսի դատանական շերտեր, ինչքիսիք հատուկ են գերմանական կամ ֆիննական մարկին եւ գործնականում կեղծման ենթակա չէ:

MAGIC SEAL

Ամերիկյան EUGENE ROSS ֆիրման Ձեր ուշադրությանն է հանձնում անվադողերի ծակումը նախազգուշացնող (վերացնող) միջոց-MAGIC SEAL:

MAGIC SEAL-ը բարդ հեղուկային կոմպոզիցիա է դրոպիլենգլիկոլի հիման վրա, որի կազմի մեջ մտնում են 19 տեսակի սինթետիկ թելեր:

MAGIC SEAL-ը լցվում է փականի միջով դողի մեջտեղ եւ թույլ է տալիս վերացնել կամերայում եւ առանց կամերային անվադողերի ծակվածքը հաշված վայրկյանների ընթացքում:

Ավտոմեքենայի ընթացքի ժամանակ ճնշման եւ կենտրոնախույս ուժի ազդմամբ օրգանական թելերը լցնում են ծակվածքը, չեն կոցնում այն: Այդ դատճառով տակը ստացվում է ամրակուն, ինչպիսին կլիներ վուլկանիզացիայի ժամանակ եւ կամերայի դողի դեղումն կամերը չի կոտրում դողին: MAGIC SEAL-ն ունի տակի սերտիֆիկատ, տրված Ռուսաստանի դետստանդարտի եւ դողերի արտադրության գիտահետազոտական ինստիտուտի կողմից:

A STYLE

Երեւան, Նոր Նորքի 1 զանգված, Դանիելի 13 (թիվ 15 ավտոբուսի տանը, «Շինանյութ» խանութից 200 մ ներքեւ)

Հեռախոս 63-76-45

Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների առաքման եւ դահանջարկի մասին հեռախոսով: Զանգահարել 589167, 581351 «Սկիզբ»

«Գարեգին» հրատարակչության տարան, Երեւան 23, Արտակոնաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1965 Տպաքանակը՝ 7000 Ստորագրված է տպագրության՝ 30.10.1995 Գինը՝ 50 դրամ

digitised by A.R.A.R.@